

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



Վ. Հ. ԳՈՒԼԲԱՆՅԱՆ
Հայկ. ՍՍՌ ԳԱ իսկական անդամ

ՑՈՐԵՆԻ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ԵՎ
ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ



1954

Վ. Հ. ԳՈՒԼՔԱՆՅԱՆ

Հայկ. ՍՍՐ ԳԱ Իսկական անդամ

633.11:631.52

4-95

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ՑՈՐԵՆԻ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ԵՎ ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ
Մ Ա Ս Ի Ն

~~ՀՀԳԱԿԱՆ~~

18198

A

В. О. ГУЛКАНЯН

Действительный член АН Армянской ССР

О селекции и семеноводстве пшеницы

(На армянском языке)

Общество по распространению политических
и научных знаний Арм. ССР

Ереван—1954

1. ԱԳՐՈՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեր երկրում ստեղծված և անշեղորեն ու արագությամբ զարգացող ծանր արդյունաբերությունը սոցիալիստական գյուղատնտեսության բարձրացման համար հաստատուն հիմք է հանդիսանում: Գյուղատնտեսության կոլտնտեսային ձևը հիանալի հիմք է տալիս լիարատար ձևով օգտագործելու տեխնիկական այն բոլոր միջոցները, որ կարող է տրամադրել և առատորեն տրամադրում է մեր արդյունաբերությունը գյուղատնտեսությանը, այսինքն՝ քաղաքը գյուղին, մեր սոցիալիստական հայրենիքի բանվոր դասակարգը՝ կոլտնտեսային գյուղացիությանը:

ՍՄԿՊ ԿԿ Սեպտեմբերյան պլենումում տված իր զեկուցման մեջ ընկեր նիկիտա Սերգեևիչ Խրուշչևը հստակորեն ցույց տվեց, թե ծանր մեքենայական արդյունաբերությունը որքա՛ն մեծ նշանակություն ունի գյուղատնտեսության զարգացման համար: Նա խոսեց առև Սովետական Միության Կոմունիստական պարտիայի կողմից հետևողականորեն իրականացվող այն հիմնական նպատակի մասին, որը դրվում է արդյունաբերության և գյուղատնտեսության առաջ՝ իրագործել մեր սովետական ժողովրդի, մեր ողջ հասարակության հարատև աճող նյութական և կուլտուրական պահանջմունքների մաքսիմալ բավարարումը:

Պետք է ասել, որ մեր երկրի ժողովրդի բարեկեցության հարցը ամենից առաջ նախադեմք ժողովուրդների մեծագույն առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինը: Այդ հարցը իր «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» աշխատության մեջ զարգացրեց Լ. Բ. Միսսարիոնովիչ Ստալինը: Ընկեր Գեորգի Մաքսիմիլիանովիչ

Մալենկովը ՍՄԿՊ 19-րդ համագումարում և Սովետական Միության Գերագույն Սովետի 5-րդ սեսիայում ծավալուն կերպով ուղիներ նշեց, թե ինչպես անել, որպեսզի մեր ժողովրդի բարեկեցությունը կուլտուրական և նյութական տեսակետից բարձրանա այնպես, ինչպես այդ նախագծում էր Վլադիմիր Իլյիչ Լենինը:

Եվ ահա, ՍՄԿՊ կի Սեպտեմբերյան պլենումը, քննության առնելով սովետական ժողովրդի բարեկեցության բարձրացման հարցերը, նշեց, որ այդ հոյակապ խնդրի լուծման հիմնական ուղենիշերից մեկը հանդիսանում է մեր երկրի սոցիալիստական գյուղատնտեսության արագատեմպ զարգացումը՝ անասնաբուծության, բանջարաբուծության, հացահատիկների և այլ ուղղությամբ: Պլենումը նշեց, որ սոցիալիստական գյուղատնտեսությունը, որը հենվում է մեր երկրի հզոր արդյունաբերության վրա, դեռևս չի դրսևորել իր բոլոր հնարավորությունները, մեր երկրի ժողովրդի բոլոր նյութական պահանջմունքները բավարարելու ուղղությամբ: Իսկ այդ պահանջմունքների բավարարման համար անհրաժեշտ է, որպեսզի փարթամորեն զարգանան անասնաբուծությունը և հողագործությունը իրենց բոլոր ճյուղերով:

Սեպտեմբերյան պլենումը նշեց, որ «հացահատիկային տնտեսությունը ամբողջ գյուղատնտեսական արտադրության հիմքն է Ուստի և պլենումը խնդիր դրեց «...ամեն կերպ զարգացնել հացահատիկային տնտեսությունը և առանձնապես ամենից ավելի արժեքավոր պարենային կուլտուրայի՝ աշնանացան և դարձանացան ցորենի արտադրությունը, բերքատվության հետագա բարձրացմամիջոցով...»:

Ահա այս խնդրի լուծման համար պահանջվում է հարատև կերպով բարձրացնել գյուղատնտեսական կուլտուրաների, այդ թվում նաև ցորենի բերքատվությունը: Իսկ ցորենի, ինչպես և բոլոր գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացումը պահանջում է միջոցների մի ամբողջ սխեմի, ինչպես ասում են միջոցների կոմպլեքսի կիրառում: Այդ սխեման, որը մշակել և ուսումնասիրել են Վոստիչևը, Դոկուչաևը, Վիլյամսը, հայտնի է որպես հողագործության խոտադաշտային սխեմա:

Հողագործության խոտադաշտային սխեման բաղկացած է մ

քանի հիմնական օղակներից, որոնց իմաստը, նպատակը ավելի ու
ավելի բարձր բերքի ստացումն է:

Այդ սխեմայի հիշտ կիրառման համար անհրաժեշտ է ամենից
առաջ ուսումնասիրել և պարզել տվյալ միջավայրի բնական պայ-
մանները: Որքան մանրամասն կերպով են ուսումնասիրված այդ
պայմանները, այնքան ավելի հեշտ է դառնում գյուղատնտեսական
արտադրության կազմակերպումը: Օրինակ, բավական չէ ուսումնա-
սիրել բնական պայմանները ռեսպուբլիկայի մասշտաբով, այլ հար-
կավոր է այդ պայմաններն ուսումնասիրել գոնե միմյանցից տար-
բերվող գոնաների մասշտաբով, իսկ ավելի լավ է՝ յուրաքանչյուր
ինքնուրույն գյուղատնտեսական միավոր հանդիսացող տնտեսու-
թյան մասշտաբով: Այսպիսի կոնկրետ ուսումնասիրությունը հնա-
րավորություն է տալիս ցանքաշրջանառություն կիրառել տեղի
պայմանների համար կոնկրետացրած կերպով և հիշտ կազմակեր-
պել գյուղատնտեսական արտադրությունը ամեն մի ինքնուրույն
միավոր հանդիսացող տնտեսությունում, ինչպիսին են մեր սովխոզ-
ները և կոլտնտեսությունները:

Տնտեսությունների արտադրողականությունը բարձրացնելու
գործում մեծ դեր են կատարում անտառային գոտիները և շերտերը:
Վերջիններս դաշտերը պաշտպանում են քամիներից, խորշակից,
դաշտի շրջապատում որոշ խոնավություն են ստեղծում և օժանդա-
կում հողի խոնավության պահպանմանը:

Գյուղատնտեսական բոլոր կուլտուրաների, այդ թվում նաև
ցորենի բերքատվության համար անհրաժեշտ է տեղի պայմաննե-
րին համապատասխան ցանքաշրջանառություն, որտեղ խոտացա-
նությունը, եթե այն արդյունավետ է և բարձր բերքատու, մեծ նշա-
նակություն ունի, քանի որ լավացնում է հողի ստրուկտուրան, մեծ
չափերով բարձրացնում է նրա բերրիությունը, որոշ չափով փոխում
է միջավայրը ոչ միայն նրա ստրուկտուրայի, այլև միկրոֆլորայի
տեսակետից, իսկ այսպիսի փոփոխությունը կարևոր ազդեցություն
է թողնում բոլոր կուլտուրաների, որոնց թվում նաև ցորենի բերքի
բարձրացման վրա: Եվ այս հասկանալի է, քանի որ բույսերի աճ-
ման միջավայրի ամեն մի փոփոխություն, որը տեղի է ունենում

նրանց բնույթի համար ընդունելի սահմաններում, որպես կանոն, տալիս է լավ արդյունք:

Այնուհետև, բույսերի բերքատվության բարձրացման գործում հսկայական նշանակություն ունի ագրոտեխնիկան, որի նպատակն է հողի մշակության միջոցով բույսերի համար ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք նրան հնարավորություն տան փարթամորեն աճելու և զարգանալու՝ մարդու կարիքներին ու պահանջմունքներին համապատասխան: Իսկ բույսերը իրենց աճեցողության ու պտղաբերության համար պահանջում են լույս, ջերմություն, օդ, ջուր և սննդանյութեր: Լույսի և ջերմության աղբյուրը արևն է: Ճիշտ է, բույսերը կարելի է աճեցնել նաև արհեստական լույսի ու ջերմության պայմաններում, սակայն գյուղատնտեսական արտադրության մեջ բույսերը լույսն ու ջերմությունը արևից են ստանում:

Կարևոր է նշել, որ բույսերը լույսից ու ջերմությունից օգտվում են իրենց վերհողյա օրգանների միջոցով, որոշ շափով բույսերը ջերմություն ստանում են նաև իրենց արմատային սիստեմով, ըստ որում դա այն ջերմությունն է, որը կուտակվում է հողի մշակելի շերտերում:

Մենք այստեղ հատկապես շեշտում ենք լույսի և ջերմության դերը, որպես այն էներգիայի, առանց որի բույսերի մեջ չեն կարող տեղի ունենալ սննդառական այն բազմապիսի պրոցեսները, որոնց հաջող ընթացքից է կախված նրանց բերքատվությունը:

Բույսերը արտաքին միջավայրից սննդանյութեր են վերցնում իրենց արմատներով և վերհողյա օրգաններով: Մոտիկ անցյալում գիտնականները այն տեսակետն էին պաշտպանում, թե բույսերը հողից իրենց արմատներով վերցնում են ջուր և հանքային նյութեր, իսկ օդից իրենց տերևներով և առհասարակ կանաչ մասերով վերցնում են ածխաթթու և թթվածին: Այժմ գիտության մեջ կիրառվող մի մեթոդի շնորհիվ, որը կոչվում է նշված ատոմների մեթոդ, պարզվել են բույսերի սննդառության հետ կապված բազմաթիվ հետաքրքրական հարցեր, որոնց թվում նաև այն, որ, օրինակ, բույսերը ածխաթթու ստանում են ոչ միայն օդից վերհողյա օրգաններով, այլև հողից արմատներով, թթվածինը՝ ոչ միայն օդից, այլև

արմատներն միշտցով վերցրած չրից, որ բույսերը վերհողլա օր-
դաններով ևս կարող են ընդունել ֆոսֆոր, ազոտ, բոր և այլն, որը
հայտնի է որպէս արտաարմատային սնուցում:

Արտաքին միշտվայրում դռնվող սննդանյութերը բույսերն օգ-
տագործում են այնքան հաջող և ինտենսիվ, որքան նրանք աճման
ու զարգացման տեսակետից լավագույն վիճակում են գտնվում: Իսկ
այս վիճակը ամենից առաջ պայմանավորվում է ագրոտեխնիկա-
յով:

Ագրոտեխնիկայի հետ սերտորեն կապված է հողի պարարտա-
ցումը: Բույսերը հողից մեծ քանակությամբ սննդանյութեր են վերց-
նում: Հայտնի է, որ բույսերի մի մասի արմատները ամբողջովին
կամ մասամբ, այնուհետև տերևների մնացորդներ և այլն, մնում
են հողում, ժամանակի ընթացքում փտում, միկրոօրգանիզմների
միջոցով քայքայվում ու հանքային նյութերի վերածվում և այսպի-
սով մատչելի դառնում բույսերի համար: Այնուհետև, նկատելի է,
որ հողի պարարտացումը, նույնիսկ ամենաբերրի հողի, նպաս-
տում է բույսերի բերքատվության բարձրացմանը: Սակայն, ամե-
նից առաջ անհրաժեշտ է հողը մշակել, ըստ որում մշակել
նշանակում է ժամանակին, եվ եթե հողը նշանակվում ու նշան-
ակարարացվում, ապա տարեցտարի բարձրացնում է նրա բեր-
րիությունը:

Հայտնի է, որ բույսերն իրենց զարգացման համար պահան-
ջում են մեծ քանակությամբ նյութեր, որոնք մի ամբողջ շարք են
կազմում: Բույսերի մեջ հանդիպող էլեմենտները դիտնականները
բաժանում են երեք խմբի՝ մակրոէլեմենտների, միկրոէլեմենտների
և ուլտրամիկրոէլեմենտների:

Մակրոէլեմենտներ. թթվածին, ջրածին, ածխածին, ազոտ, ֆոս-
ֆոր, կալիում, կալցիում, մագնեզիում, ծծումբ, սիլիցիում, երկաթ:

Միկրոէլեմենտներ. յոդ, բոր, զառիկ, (մկնդեղ), ցինկ, պղինձ:

Ուլտրամիկրոէլեմենտներ. ուրան, ռադիում, տորիում, ցեզի-
ում, կորալում:

Այս նյութերից յուրաքանչյուրը, մյուս նյութերի հետ միասին
վերցրած, պայմանավորում է բույսի նորմալ սննդառությունը, նրա
սննդողությունը և զարգացումը:

Ապացուցված է, որ եթե անասնակերում կամ հողում պակասում է պղինձը, ապա խանգարվում է բույսերի նորմալ նյութափոխանակությունը, ինչպես, օրինակ, հացահատիկները հիվանդանում են այսպես կոչված «մշակման հիվանդությամբ», որի դեպքում բույսը հատիկներ չի առաջացնում: Իսկ երբ հողի մեջ մտցվում է 15—25 կիլոգրամ պղնձարջասպ, այդ դեպքում բույսերը նորմալ բերք են տալիս: Պետք է ասել նաև, որ եթե կերի մեջ պղինձը պակասում է, այդ դեպքում խանգարվում է տվյալ կենդանի մարմնի նորմալ նյութափոխանակությունը:

Եթե բույսերի մեջ պակասում է ուլտրամիկրոէլեմենտներից որևէ մեկը, օրինակ, ռադիումը, ուրանը կամ տորիումը, այդ դեպքում նրանք թույլ են աճում և համարյա չեն ծաղկում:

Արդեն պարզված է, որ բոլր մեծ շափերով բարձրացնում է բույսերի, հատկապես թիթեռնածաղկավորների, բանջարանոցային և այլ կուլտուրաների բերքը:

Այսպիսով, բույսերը պահանջում են թթվածին, ջրածին, ածխածին, ազոտ, ֆոսֆոր, կալիում, կալցիում, մագնեզիում, պղինձ, ծծումբ, ֆտոր, երկաթ, սիլիցիում, բոր, ցինկ, մարգանեց, յոդ, զառիկ և այլն: Այս ամենից է կազմվում բույսերի մարմինը, նրանց բոլոր բջիջները, բոլոր օրգանները՝ արմատները, ցողունը, տերևները, սլտղային բոլոր օրգանները: Այստեղից էլ բխում են այն խնդիրները, որոնք դրվում են գիտության այն ճյուղի առջև, որը զբաղվում է հողի պարարտացման հարցերով:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ բույսերից առավել օգուտ ստանալու համար ագրոտեխնիկան և պարարտացումը հսկայական նշանակություն ունեն, որոնք, ինչպես վերևում ասվեց, պետք է կոնկրետ լինեն և համապատասխանեն տեղի հողակլիմայական պայմաններին ու մշակվող բույսերի պահանջներին:

Սակայն չի կարելի առանձնապես շեշտել մի հանգամանք. այդ այն է, որ ագրոտեխնիկական ու պարարտացման աշխատանքները պետք է կատարվեն ժամանակին և բարձր որակով, հակառակ դեպքում այդ աշխատանքները չեն կարող տալ ցանկալի արդյունք. դեռ ավելին՝ նույնիսկ գործադրված աշխատանքը չի արդարանա, քանի որ նրա արժեքը ավելի բարձր կլինի, քան ստացված բերքի արժեքը:

Օրինակ, աշնանացանը պետք է անել լավ մշակված ցելի վրա։
Գարնանացանը պետք է կատարել ցրտահերկի վրա։ Յելը գրավա-
կան է ցորենի բարձր բերքատվության։ Կարևոր են նաև մյուս
միջոցառումները՝ պարարտացում, լավորակ սերմ, պայքար մոլա-
խոտերի և հիվանդությունների դեմ և այլն։ Սակայն վնասականը
ցելն է, ժամանակին ու որակով կատարված ցելը և ժամանակին
կատարված ցանքը։ Եվ ահա, ՍՄԿՊ ԿԿ Սեպտեմբերյան պլենումը
հատուկ ուշադրություն է դարձրել ժամանակին ու բարձր որակով
կատարված ու մշակված ցելի և ժամանակին կատարված ցանքի
վրա, նշելով նաև մյուս ձևանարկումների կարևորությունը՝ սերմա-
ցուի որակը և նորման, ցանքի ժամանակը և այլն։

Այս կապակցությամբ հարց է ծագում, թե ի՞նչ պետք է անել,
որպեսզի բույսերն ի վիճակի լինեն օգտագործելու այն բոլոր
աննդանյութերը, որոնց մասին վերևում խոսվեց։ Հնարավորություն
ունենա՞ն, արդյոք, գոյություն ունեցող բույսերը լրիվ օգտագործելու
այդ պայմանները։

Կարելի է նաև հարց դնել, թե հնարավո՞ր է, արդյոք, բարձ-
րացնել բույսերի կենսունակությունը և նրանց մեջ ստեղծել ար-
տարին պայմաններն առավել շափով օգտագործելու ունակություն։
Պարզվել է, որ այդ հարցերը լուծելի են։

Գիտության այն ճյուղը, որը զբաղվում է այդ հարցերով, կոչ-
վում է սելեկցիա և սերմնարուծություն։ Սովետական սելեկցիան և
սերմնարուծությունը հենվում են ագրոբիոլոգիական գիտության
վրա, որը իր ծագումն առել է ժողովրդական գիտելիքներից, ժողո-
վրդական պրակտիկայից, այդ գիտության վրա հանճարեղ կերպով
աշխատել է Դարվինը, այն զարգացման մի նոր աստիճանի է հաս-
ցրել ուսումնական Միչուրինը։

Մեր նպատակն է խոսել սովետական սելեկցիայի և սերմնա-
րուծության հարցերի մասին, հարցեր, որոնք ուսումնական-
ներ Կոստիչևի, Դուկուչանի և Վիլյամսի մշակած հողագործության
խոտազատային սխեմայի մեջ կազմում են մի օղակ։ Ուրեմն, մեր
նպատակը հենց այս օղակն է և, մասնավորապես, ցորենի սելեկ-
ցիայի ու սերմնարուծության հարցերի պարզաբանումը։ Սակայն,

նախքան ցորենի սելեկցիայի ու սերմնաբուծության հարցերին անցնելը, մենք պետք է փոքր ինչ կանգ առնենք երկու հարցի վրա, որոնք անհրաժեշտ են մեր քննության ենթակա նյութի լուսաբանման տեսակետից:

Այդ հարցերից առաջինը բույսերի պաշտպանությունն է հիվանդություններից և վնասատուներից: Նկատի պետք է ունենալ, որ եթե բույսերը չպաշտպանվեն հիվանդություններից և վնասատուներից, կարող են խիստ կերպով տուժել և բերքի մեծ անկում տալ: Օրինակ, ցորենը կարող է վարակվել քարամրիկով, փոշեմրիկով և ժանգերի զանազան տեսակներով, կարող է վնասվել նաև զանազան վնասատուներից: Հայաստանի պայմաններում ցորենի այդ հիվանդությունները տարածված են, և եթե անհրաժեշտ ուշադրություն ու հսկողություն չլինի, կարող են բռնկել մեծ չափերով և բերքի խոշոր կորուստ առաջացնել: Տարածված են նաև զանազան վնասատուներ, որոնք նույնպես պետք է հսկողության տակ լինեն, ճնշվեն և, եթե հնարավոր է, ոչնչացվեն համապատասխան պայքարի միջոցով: Ուրեմն, հիվանդությունների և վնասատուների վնասը նվազեցնելու կամ իսպառ վերացնելու միջոցը համապատասխան պայքարի կազմակերպումն է, որը պետք է հիմնավորված լինի ճշգրիտ գիտա-հետազոտական աշխատանքների միջոցով: Իսկ ցորենի վրա տարածված ժանգերի դեմ պայքարելու հիմնական միջոցը իմունիտետ ունեցող սորտերի ստեղծելն է, որը պետք է անհրաժեշտ տեղ գրավի սելեկցիոն աշխատանքներում:

Երկրորդ հարցը, որ խորը և բազմակողմանի կերպով քննության է առնվել ՍՄԿՊ ԿԿ Սեպտեմբերյան պլենումում, վերաբերում է գյուղատնտեսության մեքենայացմանը: Այժմ մեր պարտիան և կառավարությունը հսկայական աշխատանք են կատարում գյուղատնտեսական արտադրության մեքենայացման համար՝ թե՛ անասնաբուծության և թե՛ հողագործության դժով: Այդ նպատակի իրականացման համար խնդիր է դրված գյուղատնտեսական մի շարք կուլտուրաների ցանքը կատարել քառակուսի և քառակուսի-բնային եղանակով, որպեսզի հնարավոր լինի նրանց խաշածե մշակությունը, որի շնորհիվ խիստ կհեշտանա գյուղատնտեսական կուլտուրաների մշակումը: Օրինակ, խնդիր է դրված քառակուսի-

բնային եղանակով մշակել կարողֆիլը, եղիպտացորենը, արևածաղիկը, այլև նախնական, պոմիդորը, ձմերուկը, սեխը և այլ կուլտուրաները: Այս բույսերը, մշակելով քառակուսի-բնային եղանակով, ոչ միայն քիչ ձեռքի աշխատանք են պահանջում, այլև շատ խնամք և սնման մակերես ստանալով, ավելի բարձր բերք են տալիս:

Այսպիսով, մենք տեսնում ենք, թե որքան մեծ ուշադրություն է դարձվում գյուղատնտեսական կուլտուրաների մշակման մեքենայացմանը:

Մեր պարտիան և կառավարությունը լայն միջոցներ են ձեռնարկել, որպեսզի գյուղատնտեսությունն է՛լ ավելի հագեցնեն նոր, ավելի կատարելագործված մեքենաներով, նպատակ ունենալով տարեց-տարի նվազեցնել ու թեթևացնել ձեռքի աշխատանքը:

Հասկանալի է, որ մեքենայացումը վերաբերում է նաև ցորենին: Պետք է ասել, որ ցորենի մշակման մեքենայացումը ներկայումս հասել է բավական բարձր աստիճանի, այդ երևում է այն բանից, որ ցորենի ցանքը, հունձը, կալսումը, հատիկի մաքրումը կատարվում են մեքենաների միջոցով:

Անպատեմբերյան պլենումում տված իր զեկուցման մեջ ընկեր խորուշներ առանձնապես խոսեց ցորենի ցանքի այնպիսի նոր եղանակների մասին, ինչպիսիք են խաշածե և նեղաշար ցանքը:

Ցորենի խաշածե և նեղաշար ցանքի եղանակները լայնորեն տարածված են Սովետական Միության մեջ և բերքի զգալի բարձրացում են տալիս: Ցանքի այդ եղանակները կիրառվում են նաև Սովետական Հայաստանում, որտեղ, ի միջի այլոց, անհրաժեշտ մանրամասնությամբ դիտողություններ չեն կատարվել, թե ցանքի այս եղանակների շնորհիվ բերքի ավելացումը Հայաստանի դանադան պայմաններում մեկ հեկտարից բանի՝ ցենտների է հասնում:

Կարող է հարց ծագել, թե ի՞նչ տարբերություն կա ցորենի խաշածե և նեղաշար ցանքածեների միջև: Բանն այն է, որ ցանքի այս ձևերի նպատակն է սերմացուն որքան կարելի է հավասարաչափ բաշխել հողում: Իսկ հատիկների հավասարաչափ բաշխումը նրանց համար ստեղծում է աճման, զարգացման և պտղաբերման ավելի լավ պայմաններ: Թե՛ խաշածե և թե՛ նեղաշար ցանքը հատիկների

համար ստեղծում են վերևում նշված պայմանները: Բայց, շատերի կարծիքով, նեղաշար ցանքը ավելի գերադասելի է, քանի որ այդ դեպքում արագանում է ցանքի պրոցեսը, հողը միայն մեկ անգամ է տրորվում մեքենայով, այնինչ խաշաձե ցանքի դեպքում մեքենաները երկու անգամ են անցնում հողի վրայով և ցանքի տևողությունը կրկնակի շափով ավելի ժամանակ է խլում:

Ահա այն մի քանի ագրոտեխնիկական բնույթի հարցերը, որոնց նշանակությունը գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման համար շատ մեծ է: Այդ հարցերը, ինչպես վերևում ասվեց, բազմակողմանի քննության ենթարկվեցին ՍՄԿՊ ԿԿ Սեպտեմբերյան պլենումում, ընդունվեցին համապատասխան ծավալուն որոշումներ, որոնք ուղեցույց են հանդիսանում ո՛չ միայն գյուղատնտեսության գործնական հարցերի լուծման, այլև գիտական հարցերի ծավալման համար:

2. ՑՈՐԵՆԻ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ինչպես ասացինք, սելեկցիան, որի նպատակն է ստեղծել բույսերի նոր, ավելի արժեքավոր ու բարձր բերքատու սորտեր, հանդիսանում է հողագործության բերքատվությունն ապահովող սիստեմի օղակներից մեկը:

Շատ հեշտ է պատկերացնել, որ եթե մենք հողի մեջ ստեղծենք մեծ բերրիություն, սակայն չունենանք այդ բերրիությունն օգտագործելու ընդունակ բույսեր, ապա երբեք չենք կարող բերքատվության բարձրացումը ապահովել այնպես, ինչպես այդ հարկավոր է: Եթե չունենանք այնպիսի բույսեր, որոնք հասունանում են միաժամանակ, ապա այդ նույնպես կդժվարացնի տնտեսությունը վարելու գործը: Ուրեմն, սելեկցիայի նպատակներից մեկն էլ այն է, որպեսզի ստեղծվեն այնպիսի բույսեր, որոնք հնարավորություն են տալիս կանոնավորելու տնտեսության ընթացքը, գյուղատնտեսական աշխատանքների պրոցեսները: Այստեղից էլ պարզ է, որ սելեկցիան՝ սորտերի ստեղծման աշխատանքը, պետք է զարգանա համաշափ մյուս բոլոր ձեռնարկումներին, որոնց նպատակը բերքատվության բարձրացումն է: Ինչպես և հակառակը. մյուս ձեռ-

նարկումները պետք է նույնպէս համապատասխան լինեն սեւեկ-
ցիոն աշխատանքներին, սեւեկցիայի միջոցով ստացվող սորտերին։
Հակառակ դեպքում կստացվի այն, որ սեւեկցիայի միջոցով ստեղծ-
ված բույսերը, որոնք կարող են շատ սննդանյութեր յուրացնել և
բարձր բերք տալ, հողում բավականաչափ սննդանյութեր չգտնելով,
ցածր բերք կտան։ Ավելին. պարզվել է, որ շատ սննդանյութեր կլա-
նելու ընդունակ բույսերը աղքատ հողի պայմաններում ավելի պա-
կաս բերք են տալիս, քան սովորական, ոչ սեւեկցիոն բույսերը։
Բացի այդ, սեւեկցիոն սորտերը մշակության պայմաններում շատա-
նալով անհրաժեշտ քանակությամբ սննդանյութեր, կորցնում են
իրենց սորտային հատկութիւնները և աստիճանաբար այլասեր-
վում։

Ինչպէս նշեց ՍՄԿՊ ԿԿ Սեպտեմբերյան պլենումը, սեւեկցիան
շատ կարևոր է, որը բարձր ագրոտեխնիկայի հետ միասին տալիս
է շատ մեծ արդյունքներ։

Սեւեկցիա — այդ լատիներեն բառ է, որ նշանակում է ընտրու-
թիւն, ըստ որում ընտրութիւն, որը կատարվում է կենդանիների ու
բույսերի միջև՝ նրանցից այնպիսիներն ընտրելու և բազմացնելու
նպատակով, որոնք իրենց այս կամ այն հատկության շնորհիվ հար-
կավոր են հասարակության դանադան կարիքները բավարարելու
համար։

Պետք է ասել, որ կենդանիներից և բույսերից մարդու կարիք-
ների համար ամենահարկավորներն ընտրելու գործը հին է, այնքան
հին, որքան հին են այն ժամանակները, երբ մարդը իր կուլտուրա-
կան կյանքի ամենավաղ արշալույսին բույսերը մշակության մեջ
մտցնելու ուղղությամբ առաջին քայլերն է արել։ Այդ գործը այն
ժամանակներում կատարվել է տարերայնորեն։ Իսկ երբ մարդկա-
յին կուլտուրայի զարգացման որոշ աստիճանում ստեղծվել է բույ-
սեր մշակելու վարպետութիւն, բույսերի և կենդանիների ընտրու-
թյան գործը դարձել է դիտակցական։ Այդպիսով իսկ սկիզբ է ա-
ռել ժողովրդական սեւեկցիան, որը օգնել է ստեղծելու անասուն-
ների բազմաթիվ ցեղեր և բույսերի սորտեր, որոնք այժմ հսկայա-
կան դեր են խաղում գյուղատնտեսութիւն մեջ։

Գյուղատնտեսական կենդանիների ցեղերը և բույսերի սոր-

տերը, որոնցից շատերը հնագույն են, դարերի պատմութիւնն ունեն
և նրանցից շատերը այժմ զարմանք ու հիացմունք են առաջացնում:
Նրանք ստեղծվել են վարպետութեամբ կատարված ընտրութեան և
բարձր զոռտեխնիկայի ու ագրոտեխնիկայի շնորհիւ: Եվ եթե սրա
վրա ավելացնենք նաև այն, որ արտաքին միջավայրը, տվյալ վայրի
հողակլիմայական պայմանները նույնպես վճռական դեր են կատա-
րել նոր տիպի անասուններ ու բույսեր ստեղծելու գործում, ապա
հասկանալի կլինի, թե ինչպե՛ս են ստացվել մեր հնագույն հիա-
նալի անասունների ցեղերը՝ կարմիր տավարը, Ղարաբաղի ձիերը,
բալբաս և մազեխ ոչխարները, բույսերի նույնքան հիանալի հնա-
գույն սորտերը՝ ցորեններից — սպիտակահատը, կարմիր սլֆա-
հատը, գյուլգանին, կունդիկը, պտղատուններից — շալախ ծիրանը,
նարնջի դեղձը, սպիտակ դեղձը, խաղողի սորտերից — ոսկեհատը,
երեւանին և այլն և այլն:

Ժողովրդական սելեկցիան մասնավորապես շատ գործ է կատա-
րել ցորենների հիանալի տեղական սորտեր ստեղծելու ուղղութեամբ:
Այդ բանը կարելի է ցայտուն կերպով տեսնել Հայաստանի պայ-
մաններում, որտեղ աճում են ներկայիս կուլտուրական ցորենների
նախահայրեր հանդիսացող վայրի ցորենները, որոնք հայտնաբեր-
վել ու նկարագրվել են Մ. Թումանյանի և Բ. Գարասեֆերյանի
կողմից:

Ահա այդ վայրի ցորենների համեմատութեանը մեր կուլտուրա-
կան ցորենների հետ ցույց է տալիս, թե ինչպիսի՛ հսկայական
գործ է կատարել մարդը՝ բնութեան մեջ գոյութիւնն ունեցող բույ-
սերը իր կարիքներին ու պահանջներին հարմարեցնելու ուղղու-
թեամբ:

Մարդը վաղուց, անհիշելի ժամանակներ առաջ, նկատել է, որ
ամենից արժեքավոր են այն բույսերը, որոնք բարձր ու լավորակ
բերք են տալիս և որոնք միևնույն պայմաններում միաման և
միաժամանակ են աճում ու հասունանում: Այս եղանակով են
ստեղծվել, օրինակ, ցորենի տեղական սորտերը, որոնք երկարատե-
ժամանակի ընթացքում այնպիսի տեսք են ընդունել և այնպիսի
բիոլոգիական հատկութիւններ ձեռք բերել, որոնք հնարավոր են
դարձնում նրանց օգտագործումը տնտեսութեան պայմաններում:

Սակայն, այսպես ստեղծված ցորենները իրենց բուսաբանա-
կան կազմով սովորաբար միատարր չեն լինում. այդ բացատրվում
է նրանց ծաղման տարբերությամբ և այն բազմազանությամբ, որը
առաջանում է հենց նրանց զարգացման երկարամյա պրոցեսի ըն-
թացքում: Բայց այդ ցորենները բիոտիպային տեսակետից բավա-
կան մոտ են միմյանց, տնտեսական օգտագործման հնարավորու-
թյուն են տալիս և, այդպիսով, հանդես են գալիս որպես տեղական
սորտեր, ինչպես ընդունված է ասել՝ պոպուլացիոն սորտեր:

Այսպես, կարելի է հիշատակել Հայաստանում մշակվող մի
շարք տեղական պոպուլացիոն սորտեր, որոնք հետևյալներն են.

Ալֆահատ — Սիսիանի շրջան, Կալեր՝ Մեղրու շրջան

Ալթի աղաշ — Կրասնոսելսկի և Շամշադինի շրջաններ

Զարդա — Արարատյան հարթավայր

Գյուլզանի — Հայաստանի հյուսիսային շրջաններ

Սոխատահատ — Հայաստանի շոր նախալեռնային գոտու շրջ-
աններ

Կունդիկ — Հայաստանի լեռնային և շոր նախալեռնային շրջ-
աններ

Քոիկ — Հայաստանի շոր նախալեռնային շրջաններ, մասամբ
Արարատյան հարթավայր,
լեռնային գոտու ցածրադիր մասեր

Տուկլուզ — Հայաստանի հյուսիսային շրջաններ, լեռնային
շրջաններում՝ տեղ-տեղ

Կարմրահատ — լեռնային շրջաններ:

Վերևում ասացինք, որ այս ցորենները միատարր չեն: Սրանց
կազմում կան բազմապիսի ցորեններ, որոնք Հայկական ՍՍՌ-ում
ընդգրկում են ոչ պակաս քան հինգ տեսակ, մոտավորապես 150—
200 այլատեսակ և ահագին թվով բիոլոգիական տիպեր, որոնք
դեռևս լրիվ չափով ուսումնասիրված չեն:

Սակայն, ինչպես վերևում ասացինք, ցորենների այսպիսի սիս-
տեմատիկ խայտարդեությունը խոչընդոտ չի հանդիսանում
նրանց մշակությանը: Նրանցից շատերը շատ լավ հարմարվել են
տեղի պայմաններին և, աճելով միասին, հարմարվել են նաև մի-
մյանց, որի շնորհիվ էլ ձեռք են բերել բազմաթիվ դրական կողմեր:

Տեղական հնագույն ցորեններից շատերի նշանակությունը բա-
վական մեծ է նաև այն տեսակետից, որ նրանք հիանալի ելանյութ
են հանդիսանում նոր արժեքավոր սորտեր ստեղծելու համար: Կա-
րելի է ասել, որ մեր տեղական ցորեններն անգնահատելի ֆոնդ են
հանդիսանում մեր երկրի համար, ուստի և այդ ֆոնդի պահպանու-
թյունն ապահովելու նպատակով սովետական կառավարությունը
1947 թվականին հատուկ որոշում է ընդունել:

Ժողովրդական սելեկցիայի հիման վրա ստեղծվել է գիտական
սելեկցիան կամ սելեկցիոն գիտությունը, այն գիտությունը, որն
ունի իր հիմունքներն ու մեթոդները, որոնց շնորհիվ էլ կենդանի-
ների նոր ցեղեր և բույսերի նոր սորտեր ստեղծելու գործը կատար-
վում է նպատակադիր կերպով:

Հանձարեղ բնասեր Չարլզ Դարվինը ցույց տվեց, որ բնության
մեջ հարատև կերպով տեղի է ունենում կենդանիների և բույսերի
փոփոխություն: Նա ցույց տվեց այն ընդհանրությունները, որոնք
կան կենդանիների մարմինների կառուցվածքում, որը ցույց է տա-
լիս նրանց ծագման մեջ եղած ընդհանրությունը: Նա ընդհանրու-
թյուններ բացահայտեց նաև բույսերի վերաբերյալ: Բնության մեջ
տեղի ունի զարգացում, որը տանում է պարզից ու ոչ կատարելա-
գործվածից դեպի բարդն ու կատարելագործվածը: Կենդանական,
ինչպես և բուսական աշխարհում հարատև կերպով տեղի է ունենում
փոփոխում և ընտրություն, ըստ որում բնության մեջ՝ բնական
ընտրություն, իսկ ընտանեցրած պայմաններում՝ արհեստական
ընտրություն: Բնության մեջ ընտրվում և շարունակում են իրենց
սերունդը այն անհատները, որոնք ավելի հարմարված են արտաքին
պայմաններին, որոնք ավելի կենսունակ են, ըստ որում օգտակար
փոփոխությունները, որոնք առաջանում են նրանց մեջ՝ փոխանց-
վում են սերնդից-սերունդ: Ընտանեցրած պայմաններում մարդը
ինքն է ընտրություն կատարում և ընտրում է այնպիսի կենդանի-
ներ ու բույսեր, որոնք ունեն մարդուն հարկավոր հատկանիշներ ու
հատկություններ, որը և հանգեցնում է նոր, բնության մեջ չհանդի-
պող տիպերի ստեղծման:

Ահա, Դարվինի այս ուսմունքը հիմք հանդիսացավ գիտական
սելեկցիայի համար, որը զարգացավ և շարունակում է զարգանալ:

մշակելով իրեն հասուն աշխատանքների սխառեմ, ուղղութիւն,
էղանակներ և միջոցներ:

Առաջ դնալով այդ ուղղութիւնամբ, սեւեկցիան զարմանալի ար-
դյունքների է հասել և կենդանիների բուրուսների զարմանալի, բնու-
թյան մեջ շահանդիպող, տիպեր ստեղծել: Դարվինն ինքն է ասում, թե՛
...մենք կարող ենք համոզված լինել, որ ընտանի կենդանիների մի
զգալի մասը վայրի վիճակում նույնիսկ չի կարող գոյութիւն ունե-
նալ: Այս կապակցութեամբ շափաղանց կարեւոր է նաև Դարվինի
արտահայտած հետևյալ միտքը. «Հայտնի չէ ոչ մի դեպք, որպէսզի
փոփոխական օրգանիզմը ընտանեցրած վիճակում փոփոխվելուց
զադարեր: Մեր հնազույն կուլտուրական բույսերը, ինչպէս, օրի-
նակ, ցորենը, շարունակում են տալ նոր ալլամետներ, մեր հնա-
զույն ընտանի կենդանիները դեռևս պահպանում են իրենց ընդու-
նակութիւնը՝ արագ կերպով փոփոխվելու և կատարելագործվելու: Դարվինի
այս դիտողութիւնները կարեւոր են և ուղեցույցային նշա-
նակութիւն ունեն սեւեկցիայի համար նաև այժմ:

Սակայն սովետական բիոլոգիական գիտութիւնը որոշ հարցե-
րում քննադատորեն է վերաբերվում Չարլզ Դարվինի ուսմունքին,
ամենից առաջ նրա այն բացատրութեանը, որ վերաբերում է բնա-
կան ընտրութեանը: Դարվինը, բացահայտելով բնական ընտրութեան
երևույթը, վերջինիս բացատրութեան համար օգտագործեց անգլիա-
կան բահանա Մալթուսի ուսմունքը գերբնակութեան վերաբերյալ:
Այդպէս վարվելով, Դարվինը գտավ, որ կենդանական և բուսական
աշխարհում եւ կա գերբնակութիւն, այսինքն կենդանիների և բույ-
սերի այնպիսի բազմացում, որը ստեղծում է թվով ավելի շատ ան-
հատներ, քան արտաքին պայմանները կարող են նրանց սնել: Ահա
այս պատճառով պայքար է սկսվում միևնույն տեսակին պատկա-
նող անհատների միջև, որի հետևանքով ուժեղները, ամենահար-
մարտունակները հաղթում են և ապրում, իսկ թուլերը պարտվում են
և ոչնչանում:

Դարվինի այս տեսակետին սովետական բիոլոգիական գիտու-
թիւնը հակադրում է այն դրույթը, որի համաձայն նոր առաջացող
անհատները իրենց կենսունակութեամբ, ապրելիութեամբ տարբեր
են. նրանց որոշ մասը թույլ է, նվազ, անկենսունակ, իսկ մյուսները

կենսունակ են: Ուստի, առաջինները չեն ապրում, իսկ երկրորդները ապրում և շարունակում են տեսակի կյանքը: Ահա հենց այս երկ-վույթը հանդիսանում է բնական ընտրության և արտաքին պայման-ներին հարմարվելու ճանապարհներից մեկը, որը և տարածված է իշխում է կենդանական և բուսական աշխարհում:

Երբ տնտեսության և գիտության զարգացումը որոշ աստիճանի հասավ, միայն ընտրության միջոցով նոր տիպի կենդանիներ ու բույսեր ստեղծելը անբավարար դարձավ: Հասավ այն ժամանակը, երբ պետք էր անցնել ավելի ակտիվ մեթոդների կիրառման: Եվ պետք է ասել, որ այդ խնդիրը ընդհանուր հարց էր, որը առաջ էր քաշվել 19-րդ դարում ինչպես հասարակական գիտությունների փոփոխման վերաբերյալ, այնպես էլ բնական ուժերի օգտագործման եղանակ-ների վերաբերյալ: Կարլ Մարքսը դեռևս 1845 թվականին մարդկա-յին հասարակության առջև խնդիր դրեց՝ «...փիլիսոփաները միայն տարբեր կերպով բացատրել են աշխարհը, բայց խնդիրն այն փո-խելն է»: (Մարքս — էնգելս, Ընտիր երկեր, հ. II, էջ 520:)

Մարքսի առաջադրած նշանաբանը հավասարապես վերաբերում էր բիոլոգիական գիտությանը: Եվ եթե առաջին մեծ հեղաշրջումը այդ բնագավառում կատարեց Չարլզ Դարվինը, ապա երկրորդ հե-ղաշրջումը կատարեց ուսման մեծ գիտնական Միշուրինը: Եթե Դար-վինի կատարած հեղաշրջումը բիոլոգիական գիտության զարգաց-ման առաջին ստադիան հանդիսացավ, ապա Միշուրինի կատարած հեղաշրջումը հանդիսացավ նրա զարգացման երկրորդ ստադիան:

Եթե Դարվինի ուսմունքի էությունը բնական և ընտանեցրած պայմաններում բույսերի ու կենդանիների փոփոխությունների օգ-տագործումն է ընտրության միջոցով, ապա Միշուրինի ուսմունքի էությունը օրգանիզմների փոփոխության ընդունակության օգտա-գործումն է՝ այդ փոփոխությունների ղեկավարման և փոփոխված օրգանիզմների նպատակադիր դաստիարակման միջոցով:

Իվան Վլադիմիրովիչ Միշուրինը ելնում էր այն հռչակավոր նշանաբանից, որը ինքն էր առաջադրել բիոլոգիայի բնագավառում՝ «Մենք չենք կարող բնությունից շնորհների սպասել, նրանից այդ-պիսիները վերցնելն է մեր խնդիրը»: Ելնելով ահա այդ նշանաբա-նից, Միշուրինը մշակեց բազմաթիվ եղանակներ՝ բույսերը նույն-

տակադիր ձևով փոփոխելու ուղղութիւնով: Նա բույսերի նպատակադիր փոփոխման եղանակները մշակեց հենց դործի մէջ, բազմաթիւ փորձերով և ստեղծեց մի քանի հարլուր նոր սորտեր՝ դերազանցաւոր օլտաւոր ծառերի սորտեր:

Միշուրինի ստեղծած նոր սորտերը, իհարկեւ, շատ կարեւոր են և հարստացնում են մեր կուլտուրաների ասորտիմենտը, մանաւանդ մեր հայրենիքի հյուսիսային շրջաններում և հարավային շրջանների բարձր լեռնային դաշտում: Սակայն ավելի ևս մեծ արժեք ունեն նրա մշակած մեթոդները, որոնք օգնում են սովետական բուսաբաններին՝ նպատակադիր դարձնելու իրենց աշխատանքները:

Որո՞նք են Միշուրինի մեթոդները, նրա ստեղծած բուսաբուծական եղանակները, նրա հարթած նոր ճանապարհները:

Միշուրինը բացահայտեց, որ պետք է առաջացնել այնպիսի օրգանիզմներ, որոնց ժառանգականութիւնը խախտւած է և որոնցից կարելի է դաստիարակման միջոցով ստանալ ցանկալի ձևեր:

Նրա առաջարկած ձևերից մեկը բույսերի խաչաձևումն է: Բույսերի խաչաձևումը վաղուց էր հայտնի: Այն հայտնի էր նաև Չարլզ Դարվինին: Իսկ Դարվինից առաջ այն հայտնի էր Ռուսաստանի Գիտութիւնների ակադեմիայում, որի աշխատակից Կոլոեյտերը դեռևս 1755—1760-ական թվականներին բացահայտեց բույսերի՝ սեռական ճանապարհով բազմանալու ուղիները և ցույց տվեց, որ խաչաձևման միջոցով կարելի է նոր ձևեր ստանալ: Նա ծխախոտի վրա բազմաթիւ փորձեր կատարեց այդ ուղղութիւնով: Իսկ Եվրոպայում այդ ուղղութիւնով սկսեցին որոշ աշխատանքներ կատարվել դրանից 60 տարի հետո միայն:

Վերևում ասվեց, որ Չարլզ Դարվինին ևս հայտնի էր բույսերի խաչաձևումը: Նա ևս դիտեր, որ բույսերի խաչաձևումից, ինչպես նաև կենդանիների խաչաձևումից առաջացած սերունդներում նկատվում են նոր, օգտակար և մարդու համար հարկավոր փոփոխութիւններ: Բայց նա դրանից այն կողմը չդնաց:

Իսկ Միշուրինը խաչաձևման հարցին մոտեցավ այլ կերպ: Նա առաջինն էր, որ բացահայտեց այն ստեղծագործական դրույթը, թե խաչաձևման եղանակով կարելի է ստանալ խախտւած, սլաքաձէլ ժառանգականութիւն ունեցող օրգանիզմներ, որոնցից նպատակա-

դիր, համապատասխան դաստիարակման միջոցով կարելի է ստանալ ցանկացած ձևեր:

Միշուրինը պարզեց, թե ինչպես կարելի է բնորել ծնողական ձևերը, որպեսզի նրանց սերունդը ցանկալի շափով խախտված ժառանգականություն ունենա: Նա ցույց տվեց, որ ծնողական դույզները հեռավոր, օտար վայրերից վերցնելու և նոր միջավայրում խաշաձևելու միջոցով կարելի է ստանալ պլաստիկ ժառանգականություն ունեցող սերունդ, որից հեշտ է դաստիարակման միջոցով նոր տիպի, սորտի բույսեր ստանալ:

Միշուրինը պարզեց բույսերի բեղմնավորման բիոլոգիայի հետ կապված բազմաթիվ հարցեր, մասնավորապես մշակելով այն միջոցը, որը հնարավոր է դարձնում կամ հեշտացնում է շխաշաձևվող կամ դժվարություններ խաշաձևվող բույսերի խաշաձևումը:

Նա առաջադրեց և մշակեց վեգետատիվ հիբրիդիզացիան, որպես նոր տիպի բույսերի ստեղծման արդյունավետ եղանակ:

Միշուրինը առաջադրեց և մշակեց բույսերի դաստիարակման եղանակը՝ մենտորի միջոցով: Նա պարզեց բազմաթիվ հարցեր, որոնք ցույց են տալիս սեռական և վեգետատիվ հիբրիդիզացիայի ընդհանրությունները:

Պետք է ասել, որ Իվան Վլադիմիրովիչ Միշուրինը բիոլոգիայի մեջ նոր ճանապարհներ էր հարթում սուր պայքարի պայմաններում, պայքար, որը նա հարկադրված էր մղել ժամանակակից բիոլոգիայի մետաֆիզիկական ուղղության դեմ, վեյսմանիզմի, մենդելիզմի և մորգանիզմի դեմ:

Այս ուղղության համաձայն, կենդանի օրգանիզմների ժառանգականությունը հասկացվում էր մեխանիկորեն: Սերնդից սերունդ անցնող հատկանիշների ու հատկությունների հիմք էր ճանաչվում սեռական բջիջների քրոմոսոմներից մեկում դտնվող որևէ մասնիկ, որը դեն է կոչվում, անկախ է տվյալ օրգանիզմի մարմնից, ուստի մարմնի փոփոխումից չի ազդվում և առհասարակ փոփոխության ենթակա չէ արտաքին պայմանների ազդեցության տակ:

Գիտության մեջ գոյություն ունեցող այդ վնասակար ուղղությունը վճռական հարված հասցվեց 1948 թվականի օգոստոսին տեղի ունեցած Վ. Ի. Լենինի առկա Գյուղատնտեսական դիտություն-

ների ակադեմիայի սեփական: Այդ սեփան ամրապնդեց սովետական բիոլոգիական դիտութեան մի շարք նոր դրույթներն ու նվաճումները:

Հայաստանում սելեկցիոն աշխատանքները տարվում են Դարվինի և Միշուրինի ուսմունքի հիման վրա: Հայաստանի բուսաբույծները սելեկցիայի բնագավառում հասել են որոշ նվաճումների և արդեն մի շարք նոր սորտեր են ներդրել դյուղատնտեսական արտադրութեան մեջ: Մենք այստեղ կանգ կառնենք միայն ցորենի սելեկցիայի ուղղութեամբ կատարված և ներկայումս կատարվող աշխատանքների վրա:

Հայաստանի հողակլիմայական արտաքին պայմանների ազդեցութեամբ և մարդու կողմից կիրառվող ընտրութեան ու մշակութեան շնորհիվ ստեղծված տեղական ցորենները հիանալի հատկութուններ ունեն: Այդ ցորենները սիստեմատիկական տեսակետից բավական լայնորեն ուսումնասիրել են Մ. Թումանյանը, Բ. Գարասեֆեյանը, Գ. Աղաջանյանը և ուրիշները:

Ներկայումս աշխատանք է կատարվում Հայաստանի տեղական ցորենների բիոտիպային կամ, կարելի է ասել՝ ագրոբիոլոգիական ուսումնասիրութեան ուղղութեամբ, նպատակ ունենալով պարզել ու հրկան բերել այդ ցորենների ամենակենսունակ բիոտիպերը և վերջինիս արտադրական մշակութեան մեջ մտցնել կամ առանձին-առանձին, կամ ամենաարժեքավոր բիոտիպերից ամենակենսունակ ֆիտոցենոզներ (միմյանց համապատասխան բուսախմբեր) ստեղծելով:

Ուրեմն, եթե մենք թվարկենք սելեկցիայի այն ձևերը, որոնք կիրառվել և կիրառվում են Հայաստանում, ապա կստանանք հետևյալ պատկերը.

Առաջին՝ տեղական ցորենների բարելավում մասսայական ընտրութեան միջոցով: Այդ եղանակով ստեղծվել են մի շարք տեղական բարելավված պոպուլացիոն սորտեր, որոնք իրենց բերքատրվութեան տեսակետից բարձր արժեք ունեն: Այդ խմբին պատկանում են հետևյալ ցորենները.

Կարմիր սլֆահատ — գրավում է 34 073 հեկտ. տարածություն,

բարձր բերք է տալիս, մշակվում է լայն տարածության վրա, ցողունը թույլ է և հաճախ ցանքերը պառկում են, հացի որակը միջակ է:

Գյուլգյանի — գրավում է 16,799 հեկտ. տարածություն, լավ հաց է տալիս, բայց բերքատվությունը բարձր չէ:

Սպիտակահատ — գրավում է 26,173 հեկտ. տարածություն, լավ հաց է տալիս, բարձր բերքատվություն ունի, խոնավ տարիներին խիստ վարակվում է դեղին ժանգով:

Ալթի-աղաջ — գրավում է 18,941 հեկտ. տարածություն, հացի որակը ցածր է, բերքատվությունը լավ է:

Գալգալոս — գրավում է 12 090 հեկտ. տարածություն, շատ բարձր որակի հաց է տալիս, բերքատվությունն այնքան էլ բարձր չէ:

Կունդիկ — բարձր որակի հաց է տալիս, ցանքերը որոշ չափով պառկում են:

Սպիտակ կամշատկա — լավ որակի հաց է տալիս, մշակվում է փոքր տարածությամբ:

Երկրորդ՝ տեղական ցորեններից անհատական ընտրությամբ և այնուհետև կրկնակի ընտրությամբ ստացվել են նոր սելեկցիոն սորտեր, որոնց թվին պատկանում են հետևյալները.

Արմյանկա — գրավում է 11 268 հեկտ. տարածություն Հայաստանի լեռնային շրջաններում, բերքատու է, հացի որակը միջակ է:

Արտաշատի 42 — գրավում է 7 528 հեկտ. տարածություն Արարատյան դաշտավայրում, բերքատվությունը բարձր է, բարձր որակի հաց է տալիս, խոնավ տարիներին վարակվում է ժանգով:

Լենինականի 3 — գրավում է փոքր տարածություն Սիսիանի շրջանում, հացի որակը միջակ է, ցանքերը խոնավ տարիներին պառկում են:

Երրորդ՝ խաչաձևման միջոցով ստացվել են նոր ձևեր, որոնք ենթարկվել են դաստիարակման և ընտրության: Այդպիսի ցորեններից է հետևյալ սորտը.

Եղվարդի 4 — գրավում է համեմատաբար փոքր տարածություն Հայաստանի շոր նախալեռնային գոտու շրջաններում, բարձր բերքատվություն ունի, հացի որակը միջակ է, հասկերը դժվար են կալսվում:

Զորքորդ՝ Հայաստանում ներդրված են և կարող են ներդրվել ցորենի արժեքավոր նոր սորտեր, որոնք ստացված են Հայաստանից դուրս, սակայն փորձարկվել են մեզ մոտ և երևան բերվել մի շարք արժեքավոր կողմեր, որի շնորհիվ և ռալոնացվել են: Այդ ցորենները հետևյալներն են.

Ուկրաինկա — դրավում է 30 357 հեկտ. տարածություն Հայաստանի լեռնային շրջաններում, բերքատվությունը բարձր է, հացի որակը՝ նույնպես, խիստ վարակվում է բարամբրիկով: Այս սորտը ստացվել է Ուկրաինայում, Միբոնոմիայան սելեկցիոն կայանում, 1915 թվականին:

Կրասնոդարկա — դրավում է համեմատաբար փոքր տարածություն Հայաստանի հյուսիսային շրջաններում, ստացվել է Կրասնոդարի սելեկցիոն կայանում, դիմացկուն ցողուն ունի:

Եթե դումարենք տեղական և սելեկցիոն սորտերի դրաված տարածությունները, կստանանք մոտ 54 հազար հեկտար տարածություն: Եթե նկատի ունենանք, որ Հայաստանում ցորենի ցանքերի տարածությունը կազմում է շուրջ 300 հազար հեկտար, ապա կարող ենք պարզ պատկերացնել, թե դեռևս որքա՛ն անելիք կա, որ պետքի ցանքային այդ ամբողջ տարածությունն ապահովվի բարձր բերքատու սելեկցիոն սորտերով:

Իհարկե, սրա հետ միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ արդեն ստացված, ռալոնացված և արտադրության մեջ տեղ գտած սելեկցիոն սորտերը պետք է փոխարինվեն նոր սորտերով, որոնք պետք է ավելի բերքատվություն ունենան և բերքն էլ ավելի բարձր որակի լինի:

Մեր բուսաբույծները լայնորեն կիրառում են բույսերի խաչաձևման մեթոդը: Այս կապակցությամբ պետք է հիշատակել այն աշխատանքը, որը վերաբերում է խաչաձևումների համար ծնողական ձևեր ընտրելուն: Բաղմաթիվ փորձերի հիման վրա պարզվել է, որ կենսունակ սերունդ ստանալու համար լավագույն ծնողական ձևեր են հանդիսանում այն ցորենները, որոնք իրենց կենսունակությունը, բերքատվությունը պահպանում են մշակության լայն սահմանների

պայմաններում, այսինքն - բազմապիսի միջավայրերում: Արդեն որոշ տվյալներ են ստացվել այն ուղղությամբ, որ գարնանացան և աշնանացան որոշ ցորեններից ևս, այսինքն այնպիսի ցորեններից, որոնց մշակության սեզոնը տարրեր է, ստացվում է բարձր կենսունակություն ունեցող սերունդ:

Մեր բուսաբույծների աշխատանքների շնորհիվ պարզվել է, որ կարելի է խախտված ժառանգականություններ բույսեր ստեղծել, ցորենները մշակելով նրանց համար արտասովոր ուժեղ սնուցման պայմաններում: Այդ եղանակով ստացված ցորենները իրենց պահում են այնպես, ինչպես խաչաձևման հետևանքով խախտված ժառանգականություն ունեցող բույսերը:

Ուժեղ սնուցման հետևանքով ստացվում են նաև ճյուղավոր հասկ ունեցող ցորեններ, որոնք մշակվելով լավ ագրոտեխնիկայի պայմաններում, պահպանում են իրենց հասկերի ճյուղավորությունը: Մենք այստեղ մտադրություն չունենք մանրամասն կանոններով ճյուղավոր հասկ ունեցող ցորենների նկարագրության վրա, քանի որ նրանք ներկայումս գյուղատնտեսության համար տնտեսական նշանակություն չունեն: Այստեղ էականը այն երևույթի հաստատումն է, որ ցորենների արտասովոր ուժեղ սնուցումը հանդիսանում է նրանց ժառանգականության խախտման եղանակ:

Պարզվել է նաև, որ ցորենի խակ սերմերի ցանքի միջոցով կարելի է ստանալ խախտված ժառանգականություն ունեցող բույսեր, որոնց կարելի է դաստիարակել անհրաժեշտ արտաքին պայմաններում և նրանց մեջ ամրացնել տվյալ պայմաններին հարմարված հատկություններ:

Ահա համառոտ կերպով այն, ինչ արվել և արվում է ցորենի սելեկցիայի ուղղությամբ:

Անհրաժեշտ է առաջիկայում ամեն կերպ ուժեղացնել ցորենի նոր, արժեքավոր սորտերի ստացումը մեր տեղական ցորեններից՝ թե՛ անմիջական ընտրության և թե՛ նրանց խաչաձևման միջոցով: Դա ամենից ավելի կարճ ճանապարհն է: Պետք է նկատի ունենանք, որ Հայաստանի Կոմպարտիայի 17-րդ համագումարը, մեծ ուշադրություն դարձնելով ՍՄԿՊ ԿԿ Սեպտեմբերյան պլենումի որոշումներից բխող հարցերի քննարկմանը, նշեց, որ Հայաստանի

բուսաբույծները քիչ բան են արել նոր սորտեր ստեղծելու ուղղու-
թյամբ: Ուրեմն, մենք պետք է արագացնենք մեր աշխատանքները:

Սեպտեմբերյան պլենումը հատուկ ուշադրություն դարձրեց
կարծր ցորենների մշակության հարցերին, նկատի ունենալով նրանց
բարձր արժեքը: Անհրաժեշտ է, որպեսզի այդ ուղղությամբ կատար-
վող աշխատանքները մեզ մոտ ուժեղանան:

Սեպտեմբերյան պլենումը մեծ ուշադրություն դարձրեց նաև
ձավարային կուլտուրաների՝ հնդկացորենի, կորեկի, ապա նաև
բրնձի և շումիդայի մշակության հարցերին: Այդ ամենը շատ կա-
րևոր է, և մենք այդ խնդիրների մասին պետք է մտածենք: Այդ կա-
պակցությամբ արժե, որ մենք ուշադրություն դարձնենք այնպիսի
հացահատիկի մշակության ընդարձակման վրա, ինչպիսին է հա-
ճարը, որը հիանալի ձավար է տալիս:

3. ՅՈՐԵՆԻ ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Սերմնարուծությունը բերրատվության բարձրացման համար
շատ մեծ նշանակություն ունի: Ահա դրա համար է, որ ՍՄԿՊ ԿԻ
Սեպտեմբերյան պլենումը այնքան լուրջ ուշադրություն դարձրեց
դյուղատնտեսական կուլտուրաների, այդ թվում նաև ցորենի սեր-
մնարուծության հետ կապված հարցերի վրա:

Սերմնարուծությունը պետական միջոցառումների մի ամբողջ
սխառն է, որի նպատակն է ապահովել սոցիալիստական դյուղա-
տնտեսության պահանջի բավարարումը անհրաժեշտ քանակությամբ
և բարձր որակի սերմացուով: Այսպիսով իսկ սերմնարուծությունը
հանդիսանում է դյուղատնտեսական արտադրության ճյուղերից
մեկը, որը պետք է սերմացու արտադրի:

Ամենից առաջ պետք է նկատի ունենալ, որ սերմնարուծության
նպատակն է կուլտնտեսային և սովխոզային դաշտերի ապահովումը
բարձրորակ սերմացուով: Եվ այդ հասկանալի է, քանի որ մեր
երկիրը իր սպառողական կարիքներն ապահովում է հենց այդ
աղբյուրից, որը պետք է առատ լինի, այսինքն մեր կուլտնտեսու-
թյունների և սովխոզների դաշտերի բերրատվությունը պետք է

բարձր լինի: Իսկ բարձր բերք ստանալու համար պետք է բարձր լինի այն սերմացուի որակը, որը ցանվում է այդ դաշտերում:

Տվյալ սորտի բերքատվությունը բարձր պահելու համար նրա սերմացուն պետք է վերանորոգվի, այսինքն կոլտնտեսությունը կամ սովխոզին պետք է մշակվող սորտի նոր սերմ տրվի, որն օժտված լինի բարձր մաքրությամբ և բիոլոգիական ակտիվությամբ: Ահա այս ձևով, այսինքն սերմնափոխության միջոցով սերմը թարմացվում է:

Բայց և լինում է այնպես, որ սերմնափոխությունը բավական չի լինում տվյալ սորտի բերքատվության մակարդակը բարձր պահելու համար: Այս տեղի է ունենում այն դեպքում, երբ սորտը հոգնում է և, այդ պատճառով էլ, սերմնափոխությունը չի օգնում:

Ահա այս դեպքում անհրաժեշտություն է ծագում սորտը փոխելու, որը և կոչվում է սորտափոխում: Հին սորտը փոխվում է այնպիսի նոր սորտով, որը տվյալ միջավայրում իրեն ցուցաբերել է ավելի բարձր բերքատվությամբ: Սովորաբար այս գործողությունը սորտափոխումը, տեղի է ունենում կառավարական օրգանների որոշմամբ:

Սորտափոխումից հետո անհրաժեշտ է ամեն տարի ունենալ նոր սորտի բարձրակ սերմացու՝ կոլտնտեսային և սովխոզային դաշտերում ցանելու համար: Ուրեմն, վերջիններիս պետք է կանոնավոր և սխառեմատիկ կերպով մատակարարվեն բարձրաժեք սերմացուով, որը մեր երկրում կազմակերպվում է որոշ կերպով, այդ մասին կապի ներքևում:

Կոլտնտեսություններին և սովխոզներին սերմացու մատակարարելու համար ելնում են հետևյալից. սելեկցիոն կայանը կամ այն հիմնարկությունը, որը սորտ է ստացել, պարտավոր է իր ստացած սորտի սերմացուից տրամադրել որոշ քանակություն, որը էլիտային տնտեսություններում սխառեմատիկաբար բազմացվի և հասցվի լայն արտադրությանը: Այս սերմացուն կոչվում է էլիտա:

Էլիտան սորտի սերմացուի սկզբնական, ելակետային այն քանակությունն է, որը օժտված է ամենամեծ կենսունակությամբ: Էլիտա տվող հիմնարկությունը ստեղծում է լավ պայմաններ՝ բարձր ադրոտեխնիկական ֆոն և այդպիսով ապահովում է էլիտայի բարձր

հատկությունները: Իսկ արտադրությունը այդպիսի պայմաններ
ստեղծել չի կարողանում, որի հետևանքով էլ սերմացուի որակը,
հատկությունները աստիճանաբար իջնում, վատանում են:

Էլիտայի առաջին ցանքից ստացված սերմացուն կոչվում է ա-
ռաջին ռեպրոդուկցիա, վերջինիս ցանքից ստացվում է երկրորդ
ռեպրոդուկցիան, այնուհետև երրորդը, չորրորդը և այլն: Հասկա-
նալի է, որ առաջին ռեպրոդուկցիան ամենից թարմ է, ամենից երի-
տասարդ ու կենսունակ: Պարզ է, որ քանակի տեսակետից հնարա-
վոր չէ առաջին ռեպրոդուկցիան հասցնել կուլտեստային ու սովխո-
զային արտադրական դաշտերին: Բայց հասկանալի է՝ որքան երի-
տասարդ ռեպրոդուկցիա է հասցվում արտադրությանը, այնքան
լավ: Հենց այս էլ հանդիսանում է սերմնարուծական հարցերով
զբաղվող հիմնարկությունների նպատակը: Սերմնարուծությունը
խիստ կարևոր դործ է գյուղատնտեսական արտադրության համար,
ուստի և կառավարությունը այս հարցի վերաբերյալ մի շարք որո-
շումներ է ընդունել: Վ. Ի. Լենինի ստորագրությամբ 1921 թվակա-
նին մի դեկրետ է հրապարակվել, որի համաձայն սերմնարուծու-
թյունը հայտարարվում է որպես կարևոր խնդիր՝ Հողագործության
ժողովրդական կոմիսարիատի համար:

Դրանից հետո ևս մի շարք կառավարական որոշումներ են ըն-
դունվել սերմնարուծության վերաբերյալ: Սերմնարուծության ներկա
սիտեմը սահմանվել է 1937 թվականին, Սովետական Միության
ժողովրդական Կոմիսարների Սովետի «Հացահատիկային կուլտու-
րաների սերմերի լավացման միջոցառումների մասին» որոշմամբ:

Ի՞նչ կարդ է սահմանված այդ որոշմամբ:

Այդ որոշման համաձայն, սերմնարուծության գործը կանոնա-
վորվում է տարրեր օղակների համագործակցության միջոցով: Այդ
օղակների մեջ առաջինը՝ սկետական սելեկցիոն կայաններն են,
երկրորդը՝ էլիտային տնտեսությունները, երրորդը՝ շրջանային սերմ-
տնտեսությունները և չորրորդը՝ կուլտեստային և սովխոզային
սերմնադաշտերը:

Որո՞նք են սկետության որոշման համաձայն նրանց վրա դր-
ված պարտականությունները:

Պետական սելեկցիոն կայանների և նրանց էլիտային տնտե-

սությունների հիմնական պարտականություններն են՝ այն սորտերի էլիտային սերմացու տալը, որոնք ռայոնացվել և մշակվում են տվյալ շրջանում:

Պետական սելեկցիոն կայանները և էլիտային տնտեսությունները պետական հիմնարկություններ են, որոնք պահվում են պետական միջոցներով: Սելեկցիոն կայաններն ունեն հատուկ հողամասեր, որոնք առանձնացվում են պետական հողային ֆոնդերից: Իսկ էլիտային տնտեսությունները գտնվում են լավագույն կոլտնտեսությունների հողամասերում: էլիտային տնտեսությունները ենթակա են Գյուղատնտեսության մինիստրության համապատասխան վարչությանը, իսկ մեթոդական ղեկավարություն ստանում են սելեկցիոն կայանից:

Շրջանային սերմտնտեսությունները կազմակերպվում են լավագույն կոլտնտեսություններում, այն հաշվով, որպեսզի սրանցից յուրաքանչյուրը սպասարկի ոչ ավելի քան մեկ-երկու շրջան:

Շրջանային սերմտնտեսություններն ևս պետությունից ստանում են բավական մեծ արտոնություններ, որոնք արտահայտվում են հետևյալ կերպ. եթե շրջսերմտնտեսությունն իր ստացած սերմացուն պետությանն է տալիս բնավարձի կամ պետական պարտավորության դիմաց, ապա հանձնած սերմացուի արժեքը ստանում է կրկնակի շափով: Իսկ եթե շրջսերմտնտեսությունն իր ստացած սերմացուն կամ նրա մի մասը պետությանն է տալիս բնավարձից կամ պետական պարտավորությունից դուրս, ապա այդ դեպքում կրկնակի վճար չի ստանում, բայց դարձյալ ավելի բարձր վճար է ստանում, քան սովորական ցորենի համար: Այս դեպքում հանձնվող սերմացուի արժեքը որոշվում է հետևյալ կերպ: Եթե սերմացուն 1-ին և 2-րդ դասի է, պետությունը 37,5%-ով ավելի է վճարում, իսկ եթե սերմացուն 3-րդ դասի է, վճարվում է 25 %-ով ավելի:

Պետությունն իր համապատասխան օրգանների միջոցով սերմացուն մթերելով շրջսերմտնտեսություններից, հանձնում է կոլտնտեսություններին և սովխոզներին: Այս սերմացուի քանակությունն այնքան պետք է լինի, որպեսզի բավարարի կոլտնտեսությունների և սովխոզների սերմադաշտերի մեկ քառորդը ցանելու համար:

Շրջանային սերմանտեսությունները սերմնաբուծության սիս-
տեմի կարևոր օղակներից են: Նրանց թիվը 1940 թվականին հաս-
նում էր 2000-ի: Հայրենական Մեծ պատերազմի տարիներին
նրանց թիվը խիստ պակասեց, իսկ 1945 թվականից դարձյալ վե-
րականդնվեց և հասավ շուրջ 3000-ի:

Կոլտնտեսային և սովխոզային սերմադաշտերը, ստանալով
շրջանային սերմանտեսություններից էլիտային սերմացուի 2-րդ ուսուցի-
չական, պետք է ցանեն և աշխատել սկսեն նրա բաղմացումը:
Կոլտնտեսությունը և սովխոզը իրենց սերմնադաշտերում ցանելով
2-րդ ուսուցիչային սերմացուն, ստանում են 3-րդ ուսուցիչակ-
ցիան, այնուհետև, հաջորդ տարիներին՝ 4-րդ, 5-րդ և 6-րդ ուսուցի-
չականները: Ահա այս ուսուցիչականների սերմերով էլ ցանվում
են արտադրական դաշտերը:

Հասկանալի է, որ սելեկցիոն կայանները, էլիտային տնտեսու-
թյունները, շրջանային սերմանտեսությունները և կոլտնտեսային ու
սովխոզային դաշտերը պետք է կիրառեն բարձր ազրոտեխնիկա և
այդ ձևով նպաստեն սերմացուի ժառանգական բնույթը բարձր
պահելու գործին: ՍՄԿՊ ԿԿ Սեպտեմբերյան պլենումում տված իր
դեկուցման մեջ ընկեր խրուշչևը ասաց, որ սերմային ֆոնդերը
պետք է ստեղծել սերմադաշտերից ստացվող ընտիր սերմերից, իսկ
եթե այդ սերմերը պակաս են, ապա սերմֆոնդը պետք է ստեղծել
արտադրական ցանքերի առավել բերքատու հողերից ստացված լա-
վազույն սերմերից, ըստ որում, նախքան պետությանը հաջահա-
տիկ հանձնելու պլանի կատարումը:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ պետական որոշումներով,
որոնք ելնում են բույսերի ու նրանց սերմացուի բնույթից, բիոլո-
գիական հատկություններից, սահմանվել են այն բոլոր օղակները,
որոնք ապահովում են էլիտային սերմացուի բաղմացումը և արտա-
դրական դաշտերին հասցնելը: Սակայն մենք պետք է նկատի ու-
նենանք, որ էլիտային սերմացուն ստացվում է սորտից: Ուրեմն
սերմնաբուծության սկիզբը սերմն է, վերջինիս ստացումը:

Վ. Ի. Լենինի ստորագրած դեկրետում, որի մասին ասվեց վե-
րևում, շեշտը դրվում է բարձր մաքրություն ունեցող սորտային սեր-
մերի վրա, ըստ որում նշվում է նրանց բարձր բերքատվությունը և
չորագիմացկունությունը:

Իսկ այն սորտերը, որոնք ունեն բարձր բերքատվություն և շտադիմացկուն են, պառկող շեն, հիվանդություններին դիմանում են, հատկի բարձր որակ ունեն և այլն, ստացվում են սելեկցիայի միջոցով: Սելեկցիոն սորտեր ստանում են սելեկցիոն կայանները կամ զանազան գիտահետազոտական հիմնարկներ:

Ավելի ճիշտ կլինի, եթե ասենք, որ այս հիմնարկները գիծ են ստանում և ոչ թե սորտ: Վերջիններիս տարրերությունն այն է, որ սորտը փորձարկումն անցած և ռայոնացված գիծ է, իսկ գիծը՝ սորտի թեկնածու, որը պետք է ենթարկվի փորձարկման և ապա միայն ռայոնացվի, եթե փորձարկման ընթացքում տվել է լավ արդյունքներ:

Եթե սելեկցիոն կայանը կամ գիտահետազոտական հիմնարկությունը սելեկցիայի միջոցով արժեքավոր գիծ են ստանում, ապա նրանք շեն կարող անմիջապես հանձնել պետական սորտաստուգման: Այդ գծերը նրանք պետք է ենթարկեն նախնական ստուգման և եթե երեք տարվա ստուգման ընթացքում ստացված են հաջող տվյալներ՝ սորտից պահանջվող հատկությունների տեսակետից, որոնց մասին խոսք եղավ վերևում, ապա այդ գեպքում նրանք կարող են տրվել պետական սորտաստուգման:

Սելեկցիայի միջոցով ստացված արժեքավոր գծերը պետք է ենթարկվեն օբյեկտիվ ստուգման: Պետությունն այդ նպատակով ստեղծել է պետական սորտաստուգման հանձնաժողովներ, որոնք զոյություն ունեն Սովետական Միության բազմաթիվ մարզերում և բոլոր ռեսպուբլիկաներում: Այդ հանձնաժողովները իրենց հանձնարարված տերիտորիայի վրա, նրա տիպիկ էկոլոգիական պայմաններում ունեն սորտաստուգման հողամասեր, որտեղ փորձարկման գործը կազմակերպված է որոշ սխեմով, որը հնարավորություն է տալիս օբյեկտիվ ձևով գնահատելու փորձարկվող սորտերը:

Բացի այդ, որպեսզի փորձարկումը հաջող անցած սորտի ներդրումը արտադրության մեջ արագանա և փորձարկումն էլ բազմակողմանի լինի, փորձարկվող ցորենը ցանվում է նաև արտադրական պայմաններում:

Փորձարկումը հաջող անցած գիծը ռայոնացվում է իրեն ընույթին համապատասխան շրջանում՝ արտադրության մեջ մշակվելու:

Համար: Դրա հետ միաժամանակ սկսվում են նաև սորտի հետ կապված սերմնաբուծական աշխատանքները:

Եթե սովետական սերմնաբուծության սիստեմը պատկերացնենք աղյուսակի ձևով, ապա կստացվի հետևյալը.

Սովետական սերմնաբուծության սիստեմը

Սելեկցիոն և սերմնաբուծական աշխատանքների հաջորդականությունը	Սերմնաբուծության հետ կապված անելիքների հաջորդականությունը	Սերմնաբուծության խնդիրները լուծող հազմակերպությունները
Սելեկցիա	Սորտերի ստացումը, նախնական բաղմացում, էլիտայի սերմերի արտադրում	Սելեկցիոն կայան, գիտահետազոտական հիմնարկություն
Սորտաստուգում և ռայոնացում	Օբյեկտիվ գնահատական և ռայոնացում	Պետական սորտաստուգման հանձնաժողով՝ իր սորտաստուգման փորձադաշտերով
Սերմնաբուծություն	Սորտերի մասսայական բաղմացում, նրանց սորտային մաքրություն ու սորտային բնույթի պահպանում	Սելեկցիոն կայան, էլիտային տնտեսություն, շրջակա բնակավայրեր, կոլտնտեսությունների և սովխոզների սերմադաշտեր
Սորտային սերմերի մատակարարում	Ծխերում, պահպանում և բաժանում ըստ Գյուղատնտեսության մինիստրություն	Պետսորտմիստրում
Սորտային և սերմային ստուգում	Սերմերի արտադրության ստուգում՝ որակի բարձրացման նպատակով	Սերմի կրահակչական լաբորատորիա, ՄՏԿ սերմաստուգիչ լաբորատորիաներ

Ահա այս աղյուսակից շատ պարզ երևում է, թե ի՞նչպես է կազմակերպված սերմնաբուծությունը մեր երկրում:

Այժմ սերմնաբուծութեան սիստեմը ցույց տանք Հայաստանի օրինակով:

Ո՞րն է սերմնաբուծական սիստեմի սկզբունքը, ի՞նչն է հիմք հանդիսանում այդ սիստեմի համար: Այդ հարցի պատասխանը վերևում մեր ասածների մեջ որոշ շափով արդեն տրված է: Այստեղ մինչև այժմ մեր ասածները ամփոփենք, որից էլ պարզ կլինի ամբողջ պատկերը: Սկսենք արտադրական-մթերային դաշտերից:

Կոլտնտեսային և սովխոզային արտադրական դաշտերը սերմացու են ստանում իրենց սերմնադաշտերի կամ շատ բարձր բերք տվող այլ դաշտերից:

Կոլտնտեսային և սովխոզային փորձադաշտերը սերմացու են ստանում շրջանային սերմտնտեսություններից:

Շրջանային սերմտնտեսությունները սերմացու են ստանում էլիտային տնտեսություններից:

Էլիտային տնտեսությունները առաջին անգամ սերմացու են ստանում սորտ ստացող հիմնարկությունից՝ սելեկցիոն կայանից կամ գիտահետազոտական հիմնարկներից:

Սելեկցիոն կայանը կամ գիտահետազոտական կայանը նոր սորտը ստեղծում են որոշ կոնկրետ էկոլոգիական պայմանների համար. վերջիններս կարող են ընդգրկել մի քանի վարչական շրջաններ և կոլտնտեսությունների ու սովխոզների որոշ խումբ, որոնք գտնվում են տվյալ վարչական շրջաններում կամ սորտի մշակման էկոլոգիական շրջանում, սորտի ստուգման սահմաններում:

Պարզ է, որ էլիտայի արտադրման դործը պետք է կազմակերպվի տվյալ սորտի մշակութային էկոլոգիական շրջանում գտնվող որևէ վարչական վայրում: Սրա հետևանքով էլ էլիտային տնտեսությունները, ինչպես և շրջանային սերմտնտեսությունները կազմում են մի այնպիսի ցանց, որն ընդգրկում է մեր երկրի հողակլիմայական պայմանների ամբողջ բազմազանությունը:

Հայաստանի պայմաններում ցորենի էլիտային տնտեսությունների կազմակերպման պատկերը երևում է հետևյալ աղյուսակից.

Յոթենի էլիտային սննդամթերքները Հայաստանում

էլիտային տնտեսության վայրը	Յոթենի ո՞ր սորտի համար է էլիտա տալիս
Էնիճնակա՛ն, սելեկցիոն հայա՛ն	Կարմիր սլֆահատ, ուկրաինկա, կու՛նդիկ
Յասարղեշա՛ր, Էնիճնակա՛նի սել- հայա՛նի ֆիլիալ	Ուկրաինկա, կու՛նդիկ
Ստեփանավա՛ն, Կիրովոյի կոլտնտ.	Արմյանկա
Յասարղեշա՛ր, Նորակերտի կոլտնտ.	Ուկրաինկա
Էջմիածի՛ն, Միկոյանի տնվա՛ն կոլտնտ.	Արտաշատի 42
Ախտա, Ֆանտա՛նի կոլտնտ.	Գալգալոս
Իջևա՛ն, Աշաջուրի կոլտնտ.	Ալթի-աղաջ
Գորիս, Քարաշենի կոլտնտ.	Գյուլդանի
Աշտարակ, Ուջա՛նի կոլտնտ.	Սպիտակահատ

Մի անգամ էլ կրկնենք, որ էլիտայի արտադրությունը լուրջ և պատասխանատու գործ է։ Էլիտան այնպես պետք է արտադրել, որ սորտի մաքրությունը պահպանվի, կողմնակի խառնուրդներ չառաջանան և սորտի բնույթային հատկությունները չվատանան, այլ լավանան, որը պայմանավորվում է բարձր ազրոտեխնիկայով։

Շրջանային սերմնարուծական տնտեսությունները Հայաստանում կազմակերպված են հետևյալ շրջաններում և կոլտնտեսություններում։

Շրջանային սերմնարուծական սննդամթերքները Հայաստանում

Շրջան	Ո՞ր գյուղի կոլտնտեսությունն է	Շրջան	Ո՞ր գյուղի կոլտնտեսությունն է
Ղափան	Արծվանիկ	Աղիդրեկով	Դալլախլու
Գորիս	Քարաշեն	«	Էլփին
Սիսիան	Անդեղակոթ	Վեդի	Այգավան
«	Նորավան	«	Կարախաշ

Շրջան	Ո՞ր գյուղի կուլտնտեսու- թյունն է	Շրջան	Ո՞ր գյուղի կուլտնտեսու- թյունն է
Հոկտեմբերյան	Այգեշատ	Ալավերդի	Մաթեբ
Աշտարակ	Ուջան	Ստեփանավան	Կիրովո
Կոտայք	Զոբ	Կիրովական	Ժդանովո
Ախտա	Ֆանտան	«	Արտագյուղ
«	Մաղկունք	«	Գեղարոտ
Սեան	Վարսեր	Ախուրյան	Հարիրջանյան
Բայազետ	Կարմիր	Արթիկ	Մարալիկ
Մարտունի	Աստղածոր	«	Նոր կյանք
Բասարգեշար	Նորակերտ	Հուկասյան	Մեղրաշատ
Կրասնոսելսկ	Ճամբարակ	«	Թորոս
Շամշադին	Մովսես	Թալին	Փիրմալաք
Իջևան	Աշաջուր	Ապարան	Շինական
Ալավերդի	Նոյեմբերյան		

Սերմնաբուծական այս տնտեսությունները նույնպես պետք է իրենց աշխատանքը այնպես կազմակերպեն, որպեսզի սերմացուի որակը չիջնի, այլ միշտ բարձր մնա:

Սակայն ի՞նչ է նշանակում սերմացուի հատկությունների իջեցում և ի՞նչ է պահանջվում, ի՞նչ է անհրաժեշտ անել, որպեսզի սերմացուի որակը ոչ միայն բարձր մնա, այլև տարեցտարի լավանա:

Առաջինը, որ անհրաժեշտ է սերմացուի որակը բարձր պահելու և սերնդից սերունդ լավացնելու համար՝ ագրոտեխնիկան է, հողի մշակությունը՝ տվյալ գյուղատնտեսական կուլտուրայի պահանջների համեմատ:

Վատ ագրոտեխնիկայի պայմաններում բույսը ճնշվում է և վերջ ի վերջո զրկվում բարձր բերք տալու հատկություններից: Լավ ագրոտեխնիկան, ընդհակառակը, բույսը կենսունակ է դարձնում, նրա մեջ ստեղծելով լավ աճելու և պտղաբերելու հատկություն:

Բարձր ագրոտեխնիկա ասելով հասկացվում են հողի մշակության այն բոլոր օղակները, որոնք բարձրացնում են նրա բերրիությունը: Իսկ բերրիության պայմաններում բույսը լավ է սնվում և դրսևորում ու զարգացնում է բարձր կենսունակություն:

Ազրոբիտլոգիական դիտութիւնն այժմ շատ մեծ ուշադրութիւն է դարձնում բույսերի աճման և զարգացման հարցերի ուսումնասիրութեան վրա, ձգտելով ամէկի ու ամէկի լիակատար դարձնել այդ պրոցեսներին ըմբռնումը: Իսկ բույսերի աճման և զարգացման հարցերը սերտորեն կապված են բույսերի սնման, այսինքն ազրոտեխնիկայի հետ: Իհարկե, այս ուղղութեամբ շատ հարցեր արդեն պարզված են, բայց շատ հարցեր էլ կարոտ են լուսարանման, որոնք և աստիճանաբար լուսարանվում են և, լայնացնելով մեր դիտելիքները բույսերի վերաբերյալ, հնարավորութիւն են տալիս ամէկի ու ամէկի արդյունավետ կերպով ղեկավարելու բույսերի աճեցողութիւնը, զարգացումն ու պտղաբերութիւնը:

Գյուղատնտեսութեան, այդ թվում նաև դյուղատնտեսական բույսերի մշակութեան համար խոշոր նշանակութիւն ունի մեքենայացումը:

Գյուղատնտեսական արտադրութեան մեքենայացումը հնարավորութիւն է տալիս թեթեւացնելու հողագործի աշխատանքը: Գյուղատնտեսութեան բնագավառի աշխատողները՝ կոլտնտեսականներն ու սովխոզների բանվորները իրենց աշխատանքի մի զգալի մասը մեքենայով կատարելու շնորհիվ ազատ ժամանակ են ունենում դյուղատնտեսական աշխատանքների և նրանց եղանակների բարելավման մասին ամէկի շատ մտածելու, որը մեծ արդյունք է տալիս և դեռ ամէկի ու ամէկի շատ պետք է տա: Գյուղատնտեսութեան մեքենայացումը հնարավորութիւն է տալիս լավացնելու բույսերի խնամքը, որը, անշուշտ, հանգեցնում է բերքատվութեան բարձրացման: Գյուղատնտեսութեան մեքենայացումը անմիջականորեն կապված է ազրոտեխնիկայի հետ և հեշտութեամբ կարելի է նկատել, թե ինչպե՞ս ազրոտեխնիկան պահանջում է որոշ կառուցվածքի մեքենաներ և թե ինչպե՞ս ազրոտեխնիկական շատ հարցեր լուծվում են դյուղատնտեսական արտադրութեան պրոցեսները մեքենայացնելու հնարավորութիւնները հաշվի առնելու հիման վրա: Ահա այս բոլորը միասին վերցրած նույնպէս պայմաններ են ստեղծում բույսերի և սերմերի բարելավման համար: Ուրեմն, անհրաժեշտ է ամէկի ու ամէկի լայն շափերով մեքենայացնել դյուղատնտեսական արտադրութեան պրոցեսները:

Բույսերի պարարտացումը ևս մեծ նշանակություն ունի նրանց բերքատվությունը և սերմերի որակը բարձրացնելու համար: Հասկանալի է, որ պարարտացումը պետք է ճիշտ կիրառվի, որպեսզի բույսի աճեցողությունը և զարգացումը նպաստավոր կերպով տեղի ունենան, հոռացում չլինի, բույսերի, օրինակ, ցորենի ցողունները չթուլանան ու չպառկեն և այլն: Ուրեմն, անհրաժեշտ է ճիշտ սնել բույսերը և այդ միջոցով ապահովել նրանց բարձր կենսունակությունն ու բերքատվությունը:

Մեծ է նաև հիվանդություններից և վնասատուներից բույսերի պաշտպանության նշանակությունը: Խոսքն այն վնասատուների մասին չէ (օրինակ՝ կրծողների), որոնք ուտում են բույսերը ամբողջապես, ծամում հասկերը, այլ այն միջատային վնասատուների մասին է, որոնք սնվելով բույսերի հյութերով, ճնշում են նրան, պակասեցնում նրա մեջ եղած սննդանյութերը և, այսպիսով, իջեցնում նրա սերմերի որակը: Այդ նույն բանն է տեղի ունենում նաև սնկային հիվանդությունների ազդեցության հետևանքով: Որպես օրինակ կարելի է բերել ժանգը, որը սնվելով բույսերի հաշվին, նրանց հյութերով, նույնպես նվազեցնում է այն սննդի քանակը, որն անհրաժեշտ է հատիկների ձևավորման ու հասունացման համար:

Անհրաժեշտ է սխառեմատիկ կերպով պայքարել բույսերի վնասատուների և հիվանդությունների դեմ, որոնք ոչնչացնում են բույսերը, իջեցնում նրանց կենսունակությունն ու բերքատվությունը:

Սերմնաբուծության գործում չափազանց մեծ նշանակություն ունի մեխանիկական խառնուրդների հարցը: Սերմնաբուծական կազմակերպությունը պետք է ամեն մի միջոց ձեռք առնի, որպեսզի սերմացուի մեջ ցորենի այլ սորտի հատիկներ չխառնվեն, կամ այլ կուլտուրաների սերմեր չընկնեն, օրինակ՝ դարու, աշորայի և այլն:

Ներկայումս հայտնի է այն կարծիքը, թե զանազան բույսերի մեջ խառնուրդներ են առաջանում այն պատճառով, որ այդ բույսերի մարմնից ծագում են նոր այլատեսակի, տեսակի ու անգամ ցեղի պատկանող օրգանիզմներ: Օրինակ՝ այն կարծիքն է տարածվում, թե ցորենի բույսի մի կետում՝ հասկի վրա կամ թիակալման

հանդուցում առաջանում է աշորայի հատիկ, որը և աղբոտում է
ցորենի ցանքերը:

Պետք է ասել, որ ցորենի ցանքերի աղբոտվելը աշորայով հո-
ղադործ ժողովուրդը վաղուց է բացատրել այն բանով, որ «ցորենը
փոխվում է աշորայի»: Այս կապակցությամբ նշվում են բազմաթիվ
դիտումներ այն մասին, որ մաքուր ցորենը ցանվել է մաքուր հո-
ղամասում և աշորայի մեծ խառնուրդ տվել: Անգամ նշվում են
բազմաթիվ դիտումներ այն մասին, թե այսինչ հողամասում ավելի
շատ է աշորա հանդես դալիս, քան թե մի այլ հողամասում: Բայց
սրանք բոլորն էլ դիտողությունների արդյունք են, որոնք թեև ար-
ժանի են լուրջ ուշադրության, սակայն, այնուամենայնիվ, հիմնա-
վորված փաստեր չեն:

Մի շարք դիտնականներ ցորենի հասկերի մեջ աշորայի հա-
տիկներ են փնտրել և հազարավոր հասկերի մեջ գտել են մի քանի
հատիկ: Սակայն, ինչպես հարկն է ճշգրիտ փորձեր չեն կատարված
ցորենի հասկի մեջ աշորայի հատիկներ առաջացնելու ուղղությամբ:

Այս ամենի հիման վրա կարելի է համոզմունք հայտնել այն
մասին, որ ցորենի ցանքերի և սերմերի աղբոտվելու հիմնական
պատճառը դրսից եկած խառնուրդներն են: Յանքերի մեջ խառ-
նուրդների առաջանալը հավանաբար հետևանք է նաև «բույսերի
փոխվելու», մի բույսի մարմնից մի այլ բույս ծնվելու: Սակայն
այս հանգամանքը դործնական կյանքի համար ոչ մի առանձին ար-
ժեք չի ներկայացնում: Սերմնարուծության տեսակետից կարևորն
այն է, որ սերմացուի մաքրությունը պահելու համար պետք է նա-
խադրուշական միջոցներ ձեռք առնել արտաքին խառնուրդներից
խուսափելու համար:

Ուրեմն պետք է պայքարել մաքուր ցանքեր և մաքուր անխառ-
նուրդ սերմացու ունենալու համար, հաշվի առնելով, որ այս հան-
դիսանում է բարձր բերք ստանալու կարևոր պայմաններից մեկը:

Սորտի և սերմացուի կենսունակությունը բարձր պահելու հա-
մար շատ մեծ նշանակություն ունի ցանքի ժամկետի փոփոխու-
թյունը: Այդ բանը հողագործ ժողովուրդը վաղուց է նկատել՝ անհի-
շելի ժամանակների առաջ:

Ժողովուրդը նկատել է, որ եթե մի բույսի սերմացուն, օրինակ՝

ցորենի սերմը, ցանվում է միշտ աշնանը, ապա վերջի վերջո այդպիսի սերմացուի բերքատվությունն ընկնում է: Փորձով պարզվել է, որ եթե մի երկցան ցորեն (որը դարնանացան է, բայց լավ արդյունք է տալիս նաև աշնանը ցանելու դեպքում) մի քանի տարի իրար հետևից ցանվում է աշնանը և հետո մի տարի՝ դարնանը, ապա այս մի տարի դարնանը ցանելը զգալի կերպով թարմացնում է նրան, ավելացնում նրա բերքատվության հատկությունը, որից հետո այն կարող է նորից մի քանի տարի ցանվել աշնանը և ավելի բարձր բերք տալ, քան տալիս էր թարմացումից առաջ: Ցորենի թարմացման այս եղանակը, ինչպես ասվեց, հին դարերի փորձից է հայտնի, այն հասել է մինչև մեր օրերը և այժմ ևս կիրառվում է որպես արդյունավետ սերմնարուծական միջոցառում:

Սերմերի թարմացման այս եղանակը վերաբերում է դարնանացան այն ցորեններին, որոնք որոշ պայմաններում, որտեղ ձմեռային կամ դարնանային խիստ սառնամանիքներ չեն լինում, կարող են ցանվել երկցան կերպով՝ և՛ աշնանը, և՛ դարնանը: Իսկ ինչպես վարվել աշնանացան ցորենները թարմացնելու համար: Պարզվել է, որ այս նպատակով կարելի է օգտագործել յարովիզացիայի եղանակը: Աշնանացան ցորենները յարովիզացիայի են ենթարկվում ու ցանվում դարնանը, այս ձանապարհով նույնպես կարելի է թարմացնել սորաը և նրա սերմերը, որոնք հետո, աշնանը ցանվելու դեպքում, տալիս են բերքի բարձրացում:

Ուրեմն, պետք է բոլոր հնարավոր դեպքերում կազմակերպել մշակվող սորաի թարմացում մշակման սեզոնի փոփոխության միջոցով:

Ցորենի սորտերի ու նրանց սերմացուի թարմացման համար նույնպիսի նշանակութուն ունի նաև մշակման վայրի փոփոխությունը: Այս փաստը նույնպես վաղուց հայտնի է հողագործներին և նույնքան հին է, որքան և երկցան ցորենների թարմացումը մշակության սեզոնի փոփոխության միջոցով:

Վաղուց հայտնի է, որ եթե մի բույս երկար ժամանակի ընթացքում մշակում են միևնույն պայմաններում, ապա այն բարձր բերք չի տալիս: Փորձի հիման վրա համոզվել են, որ եթե այդ բույսը մշակվում է մի այլ վայրում, թարմանում, բարձրացնում է իր բեր-

բառութիւններ և այս թարմացումը պահպանում է մի քանի տարիների ընթացքում:

Բույսերի սորտերի թարմացման այս եղանակը նույնպէս լուրջ սերմնարուծական նշանակութիւն ունի և կիրառւում է մեր օրերում ևս:

Այս կապակցութեամբ անհրաժեշտ է ասել, որ տեղափոխութիւնը պետք է լինի բույսի օրգանիզմի համար ընդունելի տարածութեան սահմաններում: Հասկանալի է, որ եթե բույսի որևէ սորտ տեղափոխվի և մշակվի իր բնութիւն անհամապատասխան միջավայրում, ապա նա ոչ թե կթարմանա, այլ կճնշվի և աստիճանաբար կամ միանգամից դուրս կգա մշակութիւնից:

Ուրեմն, մշակվող սորտի թարմացման համար ժամանակ առ ժամանակ պետք է փոխել նրա մշակութեան վայրը, բայց բույսի բիոլոգիայի տեսակետից ընդունելի սահմաններում:

Գիտութիւնը պարզել է նաև, որ բույսերի կենսունակութեան բարձրացման համար խիստ մեծ նշանակութիւն ունի նրանց լրացուցիչ ծաղկափոշի տալը: Այսպիսի միջոցառում կիրառւում է, օրինակ, արևածաղկի, եղիպտացորենի, աշորայի, առվույտի և այլ ուլտուրաների նկատմամբ, որոնց ծաղկման ժամանակ զանազան ձևերով ավելացնում են միկոնույն ծաղկի վրա ընկնող ծաղկափոշու անակութիւնը, որի շնորհիվ էլ բույսերը լավ են պտղաբերում ու տաքված հատիկների սերմնային արժեքը բարձր է լինում:

Բույսերի ծաղկումը բարեհաջող տեղի ունենալու դրական նշանակութիւնը նույնպէս դարերի վեր հայտնի է եղել հողագործներին: Ասենք, որ այդ բանը դժվար չէր դիտել պտղատու ծառերի վրա, որոնք եթե ծաղկում են ոչ անձրևային եղանակներին, տալիս են առատ և լավ բերք, իսկ եթե ծաղկելու ժամանակ անձրևներ են ընկնում, ապա այդ մեծ շափերով վնասում է բերքին: Երբ գիտութիւնը պարզեց բույսերի բեղմնավորման բիոլոգիան, ահա այդ հիման վրա էլ պարզվեցին ծաղկափոշու դերն ու նշանակութիւնը բեղմնավորման գործում: Եվ, քանի որ ծաղկափոշին անձրևային զանազանների պատճառով չի ընկնում կամ անբավարար կերպով է ընկնում ծաղիկների սպիւնների վրա, ապա բեղմնավորում, հետևաբար և պտղակալում տեղի չի ունենում:

Ինչպես ասվեց, այս բանը հեշտ նկատելի է պաղատու ծառերի վրա, բայց դժվար կարելի է նկատել ցորենների մոտ։ Սակայն հողագործ ժողովուրդը այս բանը վաղուց է դիտել և եզրակացրել, որ անձրևների համընկնումը ցորենի ծաղկման ժամանակի հետ վատ է անդրադառնում բերքի քանակի և որակի վրա։

Մեզ համար տվյալ դեպքում կարևորն այն է, որ լրացուցիչ փոշոտումը սերմնաբուծական կարևոր նշանակություն ունի։ Այս բանը ցորենի համար ևս գործնական նշանակություն կարող է ունենալ։ Օրինակ, ելնելով այս բանից, կարելի է ցորենի սերմնադաշտը, որտեղ հնարավոր է, այնպիսի հողամասում տեղադրել, որտեղ ցորենի ծաղկման ամիսներին քիչ անձրևներ են դալիս։ Հասկանալի է, որ մի կուլտեստեսության հողամասերի սահմաններում դժվար է հարցն այսպես լուծել, սակայն որոշ տեղերում գուցե այդ հնարավոր լինի։

Եվ վերջապես, սերմնաբուծության համար կարևոր նշանակություն ունի նաև ցորենների ներսորտային խաչաձևումը, որը առաջարկել է ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն։

Ներսորտային խաչաձևումը ավելի նպատակահարմար է կատարել սելեկցիոն կայաններում և էլիտային տեստեսություններում, սրանց ամենալավ ցանքերում։ Այսպիսի ցանքերում ընտրում են ամենալավ բույսերը և սրանցից էլ՝ ամենալավ հասկերը։ Այս հասկերը ենթարկվում են կաստրացիայի։ Կաստրացիայի ժամանակ հասկից հեռացնում են հասկի միջին մասի ու ծալքերի թույլ ծաղիկները և, այսպիսով, հասկի վրա թողնում են ամենաուժեղ ծաղիկները, որոնցից և հեռացնում են փոշանոթները, այսինքն կաստրացիա են կատարում։ Հասկը թողնում են ազատ փոշոտման համար, որը և տեղի է ունենում քամու միջոցով ուրիշ բույսերից բերված ծաղկափոշիներով, այսինքն տեղի է ունենում ներսորտային խաչաձևում։

Այս եղանակով ստացված հատիկները սերմնային լավ որակ են ունենում, որը պայմանավորվում է հետևյալով.

1. Ներսորտային խաչաձևումը կատարվում է ամենալավ ցանքերում։

2. Խաչածեման համար ընտրվում են ամենալավ բույսերը, իսկ վերջիններից էլ՝ ամենալավ հասկերը:

3. Հասկերի վրա թողնվում են ամենաուժեղ ու ամենալավ զարգացած ծաղիկները, որոնք մյուս ծաղիկները հեռացնելու հետևանքով ուժեղ սնունդ են ստանում:

4. Եվ, վերջապես, տեղի է ունենում փոշոտում որոշ շափով օտար ծաղկափոշիով:

Ուրեմն, անհրաժեշտ է կատարել ցորենի ներսորտային խաչածեում, բայց բարձր ազրոտելանիկական ֆոնի վրա, ամենալավ ցանքերում, ամենալավ բույսերի ու հասկերի վրա, և վերջիններիս վրայից հեռացնելով ամենաթույլ հասկիկներն ու ծաղիկները: Չափազանց կարևոր է, որպեսզի ներսորտային խաչածեումից ստացված սերմերը մշակվեն բարձր ազրոտելանիկական ֆոնի վրա:

Սերմացուի որակը բարձրանում է նաև հասկերի ծերատման միջոցով. սրա էությունն այն է, որ հասկից հեռացնում են նրա վերևի, ներքևի ու միջին թույլ ծաղիկները և, այսպիսով, ուժեղացնում մնացած ծաղիկների սնունդը և, հետևապես, հատիկների ձևավորման համար ստեղծում են բարենպաստ սննդային պայմաններ:

Ուրեմն, սերմնաբուծական նպատակներով կարելի է նաև հասկերի ծերատում կատարել:

Եվ, վերջապես, կարելի է նշել նաև մի հնագույն սերմնաբուծական եղանակ, որը նույնպես որոշ նշանակություն ունի լավ սերմացու ստեղծելու համար: Դրա էությունն այն է, որ ամենալավ ցանքերից ընտրում են ամենալավ բույսերը, որոնք մշակվող սորտի համար տիպիկ են և այդպիսի բույսերի հասկերից հեռացնում են հասկի վերևի ու ներքևի ամենաթույլ հասկիկները և թողնում հասկի միջին հասկիկները: Ահա այս եղանակով նույնպես կարելի է ստանալ միահավասար և արժեքավոր սերմացու:

Ուրեմն, կարելի է հասուն հասկից հեռացնել նրա թույլ հասկիկները, հետևապես՝ թույլ հատիկները և, այսպիսով, սերմացուի համար ընտրել ամենալավ հատիկները:

Բերքատվության բարձրացման տեսակետից խիստ մեծ նշանակություն ունի ցորենի սերմերի միահավասարությունը: Այդ դեպքում ցանքն էլ է լավ կատարվում՝ սերմերը միահավասար լի-

նելով, ավելի համաշափ են ընկնում հողի մեջ, սերմերի ծլումը, բույսերի աճեցողությունն ու զարգացումն էլ համահավասար է տեղի ունենում:

Սերմերի միահավասարությունը բավական մեծ շափերով կախված է սորտի հատկությունից: Այսպես, եթե սորտի բույսերը հավասարված են, թփակալությունը միահամուռ է և ցողունների բարձրությունը իրար հավասար, եթե հասկերը միանման մեծություն ունեն և հասկի բոլոր հասկիկներն ու ծաղիկները միակերպ լավ զարգացած են, այդ դեպքում հատիկներն ևս միահավասար մեծություն են ունենում:

Սակայն, որքան էլ հավասարված լինեն սորտը, նրա բույսերը, հասկերն ու հատիկները, այնուամենայնիվ նրանց մեծության միջև, այդ թվում նաև հատիկների մեծության միջև տարբերություն կլինի: Ուստի պետք է ուշադիր լինել, որպեսզի ցորենի սերմացուն մաքրելու ժամանակ մեքենայի միջոցով կատարվի այն, ինչը բնությունը չի կարողացել անել, այսինքն՝ մեքենայի օգնությամբ ջոկել և որպես սերմացու անջատել միանման մեծություն ունեցող և ծանր հատիկները:

Ընկեր խրուշչևը ՍՄԿՊ ԿԿ Սեպտեմբերյան պլենումում տված իր զեկուցման մեջ խիստ կերպով դրել է ցանքի ճիշտ նորմա ընտրելու հարցը, նշելով այդ հարցի մեծ կարևորությունը և սերմացուի նորմաների խախտման անհանդուրժելիությունը: Ահա այս կապակցությամբ պետք է ասել, որ տվյալ հարցը ոչ միայն ագրոտեխնիկական նշանակություն ունի, այլև սերմնարուծական:

Բանն այն է, որ լավ սերմացուն լավ ցանքից է ստացվում: Վատ ցանքից, նվազ բույսեր ու հասկեր ունեցող ցանքից լավ սերմացու չի ստացվում: Իսկ սերմացուի նորմայից շատ բան է կախված լավ կամ վատ ցանք ունենալու համար և, հետևապես, այս հարցը սերտ կապ ունի սերմնարուծության հարցի հետ:

Սերմացուի նորման որոշելու համար պետք է խնամքով հաշվի առնել այն, թե ցանվող ցորենը աշնանացա՞ն է, թե գարնանացա՞ն, հատիկները մա՞նր են, թե խոշոր, հատիկների ծլունակությունը բա՞րձր է, թե ցածր, հողը ջրովի՞ է, թե անջրդի, ծա՞նր հող է, թե թեթև, տեղի կլիմայական պայմանները վա՞տ են, թե լավ և այլն:

Ահա այս պայմանները բոլորն էլ կարևոր են, և գլուղատնտեսները պետք է նրանց հաշվի առնեն, որպեսզի կարողանան ցանելիք սերմի նորմաները ճիշտ որոշել:

ՍՄԿՊ Կենտկոմի Սեպտեմբերյան պլենումը նշեց, որ ներկայումս գլուղատնտեսության առջև դրված հիմնական հարցը կոլտընտեսային ու սովխոզային դաշտերի բերքատվության և անասունների մթերատվության բարձրացումն է: Ցորենի սելեկցիայի ճիշտ կիրառումը, նրա նոր, բերքատու սորտեր ստեղծելը այդ կարևորագույն աշխատանքի մի օղակն է: Ուստի և հասկանալի է, որ Հայաստանի բույսաբույծները պետք է ավելի լայն շափով ձեռնարկեն այդ աշխատանքները:

Խմբագիր՝ պրոֆ. Գ. ԱՂԱՋԱՆՅԱՆ
Ավագ սրբագրիչ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎՅ 10891:

Գատվեր 1929:

Տիրաժ 5000

Հանձնված է արտադրության 17/V 1954 թ.:
Ստորագրված է տպագրության 10/V 1954 թ.:
Գինը՝ 60 Կ.

Հայպոլիգրաֆհրատի № 6 տպարան, Երևան, Լենինի պող. № 51, 1954 թ.:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008793

ԳԻՆԸ 60 Կ.

118198